Ազգ
Azg
7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 219(5071)
ISSN: 1829-1651

# Ադամ Շիֆ. «Ադրբեջանը բարձր գին պետք է վճարի իր արարքների համար»

## *Հարեւանները ամերիկացի կոնգրեսականից ուզում են, որ իր ընտրողներին լսելու փոխարեն վարվի «խավիարակերների» պես*

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

**Գողը բոլորից բարձր է գոռում, թե բռնեք գողին: Ադրբեջանը շատ դեպքերում հենց այս մարտավարությամբ է առաջնորդվում, ընդ որում հանգամանքների խեղաթյուրումն ու փաստերի տարամեկնաբանությունները նորությունների բաժնից չեն, հատկապես երբ գործի է դրվում ադրբեջանական պաշտոնական քարոզչամեքենան: Այդ մեխանիզմի ցցուն դրսեւորումներ ներկայացնող Ադրբեջանի արտաքին գործերի գերատեսչությունն էլ այնքան հաճախ է անգրագետ ու կիսատ-պռատ մոտեցումներով փորձում «շտկել» իրավիճակը, որ անխնայորեն սխալ դատողությունների առնչությամբ մեկնաբանություններ անելու հիմք չի մնում:**

**Հերթական անգամ ադրբեջանական դիվանագիտական միտքը փորձել է մանեւրել՝ անդրադառնալով ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆի նամակներից մեկին, որով վերջինս, որպես Ներկայացուցիչների պալատի հատկացումների հանձնաժողովի անդամ, իր գործընկերներին ու Սենատին կոչ է արել դադարեցնել Ադրբեջանին տրամադրվող անվտանգության աջակցությունը, ավելի պարզ ասած՝ ռազմական օգնությունը: Շիֆը մասնավորապես նշել է, որ Ադրբեջանին ռազմական աջակցությունից զրկելու առաջարկը գալիս է Իլհամ Ալիեւի կողմից մարդասպան Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու շուրջը շարունակվող սկանդալից:**

**«Ադրբեջանն արդարադատությունն ամենախիստ ձեւով խաթարող քայլ է արել՝ սառնասիրտ մարդասպանին հերոս դարձնելով: Ադրբեջանական զինուժի դասընթացների մեջ մեր ներդրումները վատնելուց վատ արդյունք են տվել: ԱՄՆ-ը չպետք է ագրեսիայի որեւէ քայլ հանդուրժի ընդդեմ Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի, եւ Ալիեւի՝ ատելությամբ լի այդ գործողությունը խաթարում է տարածաշրջանում խաղաղ կարգավորման հասնելու միջազգային ջանքերը», ասված է Շիֆի նամակում:**

**Կոնգրեսականը նաեւ շեշտել է, որ Ադրբեջանը բարձր գին պետք է վճարի իր արարքների համար, ավելացնելով, որ Բաքուն գնահատում է Վաշինգտոնից ստացվող ռազմական օգնությունը «ոչ թե որ փողի կարիք ունի, այլ որովհետեւ դա երկկողմ մերձավոր հարաբերությունների նշանավորում է»: «Դադարեցնելով ռազմական աջակցությունը Ադրբեջանին՝ ԱՄՆ-ը ցույց կտա իր գարշանքը Սաֆարովի դեպքի առնչությամբ, նաեւ հիշեցնելով Ալիեւին, որ ԱՄՆ-ը չի հանդուրժի ագրեսիվ քայլեր Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի դեմ»:** *Տես էջ 5*

# Գյումրի. «Քաղաքը մերն է» նախաձեռնությունը կոչ է ուղղել իշխանություններին




***88-ի երկրաշարժ. ահասարսուռ հիշողություն եւ մշտական զգուշացում***

1988-ի Սպիտակի երկրաշարժի հերթական տարելիցի նախօրեին Գյումրու «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունը պատրաստել է Հայաստանի իշխանություններին ուղղված մի կոչ, որում արձանագրում է, թե չնայած անցած տարիներին իրականացված բնակարանաշինությանը, երկրաշարժից 24 տարի անց աղետի գոտին դեռ ամբողջովին չի վերականգնվել: Միայն Գյումրիում երկրաշարժից անօթեւան է եւ տնակներում է ապրում ավելի քան 2 000 ընտանիք (աճած եւ կիսված անօթեւան ընտանիքներ, չհաշվառված, բայց բնակարաններ կորցրած ընտանիքներ), իսկ այլ անօթեւան ընտանիքների թիվը 2 200-ից ավելի է (ներգաղթյալներ, սոցիալական պատճառներով բնակարաններն օտարած եւ տնակներում կացարան գտած ընտանիքներ եւ այլն): Գործազրկությունը, աղքատությունը Գյումրիում եւ Շիրակի մարզում կործանարար չափեր ունեն, պաշտոնական տվյալներով աղքատ է համարվում գյումրեցիների թվի 47 տոկոսը:

Դիմելով հանրապետության իշխանության մարմիններին, «Քաղաքը մերն է» նախաձեռնության ներկայացուցիչները կոչ են անում եւ հիմնախնդրի լուծման նպատակով առաջարկում են, մասնավորապես, ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 1998 թ. 432-րդ որոշումը՝ առաջիկա 2 տարիների ընթացքում ըստ անձերի թվի լուծելով երկրաշարժից անօթեւան դարձած, հետագայում աճած եւ կիսված ընտանիքների այն մասերի բնակարանային խնդիրը, որոնք մնացել են տնակներում բնակվելու, երկրաշարժից փաստացի անօթեւան, բայց չհաշվառված ընտանիքներին հնարավորություն տալ հաշվառվելու ու փոխհատուցվելու եւ այլն: Որոշ տարբերակներ են առաջարկվում նաեւ՝ ուղղված այլ պատճառներով անօթեւան ընտանիքների խնդիրների լուծմանը, որոնց թիվը եւս քաղաքում քիչ չէ:

Նկատի ունենալով անցյալի փորձը, կոչի հեղինակները նշում են, թե անօթեւանության խնդիրը շուտափույթ չկարգավորելու դեպքում անօթեւան ընտանիքների թիվը շարունակաբար մեծանալու է, աճելու է արտագաղթը, եւ սոցիալական ճգնաժամն ու մշակութային օտարումը դառնալու են անհաղթահարելի: **Գ. Ս.**

# Ջանքեր, որ 2013-ի ԱՄՆ բյուջեով Արցախին տրամադրվի 5 մլն օգնություն

**Դեկտեմբերի 5-ին ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆը Վաշինգտոնում հանդիպել է ԼՂՀ արտգործնախարար Կարեն Միրզոյանին: Ըստ կոնգրեսականի մամուլի պատասխանատու Պատրիկ Բոլանդի հաղորդագրության՝ հանդիպմանը քննարկել են Հարավային Կովկասի վերջին զարգացումները, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի շուրջը զարգացումներում ԱՄՆ շարունակվող ներգրավվածության կարեւորությունը: Ադամ Շիֆը մշտապես իր աջակցությունն է բերել Լեռնային Ղարաբաղին մարդասիրական աջակցությունը մեծացնելու ու զարգացման օժանդակության համար:**

**«Ես ԱԳ նախարար Միրզոյանին տեղեկացրի իմ ջանքերի կարգավիճակի մասին՝ հասնելու 2013-ի բյուջեում նախկին 2 մլն աջակցության փոխարեն 5 մլն ունենալու առնչությամբ, ինչը վերջնական կորոշվի եկող շաբաթների ընթացքում», ասել է Շիֆը:**

**Հանդիպմանը քննարկվել է նաեւ Ռամիլ Սաֆարովի դեպքը, որի առնչությամբ Շիֆը նամակ էր հղել կոնգրեսական ու սենատոր իր գործընկերներին:**

**Վ. Պ.**

# ԵՄ վերջին դիվանագետները հեռացել են Սիրիայից



**Հունգարիայի կառավարությունը հայտարարել է, որ Դամասկոսից տարհանվել է իր ամբողջ դիվանագիտական անձնակազմը: ԱԳՆ-ում Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել են, որ այդ որոշումն ընդունվել է Սիրիայի մայրաքաղաքում տիրող «կրիտիկական իրավիճակի» կապակցությամբ:**

**Մինչեւ վերջերս Հունգարիան Եվրոմիության միակ երկիրն էր, որի դեսպանությունը դեռ գործում էր Դամասկոսում: ԵՄ մյուս երկրները իրենց դիվանագետներին տարհանել էին ամիսներ առաջ:**

**Սիրիայից դիվանագիտական անձնակազմի տարհանման կապակցությամբ Հունգարիայի ԱԳՆ-ն համաքաղաքացիներին խորհուրդ է տվել հյուպատոսական աջակցություն ստանալու համար դիմել Բեյրութում գործող Հունգարիայի դեսպանությանը:**

**2 օր առաջ Սիրիայից տեխնիկական անձնակազմը տարհանելու որոշում էր ընդունել ՄԱԿ-ի տեղական ներկայացուցչությունը: Այդ քայլը նույնպես բացատրվում է անվտանգության նկատառումներով:**

# Բումերանգ

Վերջին օրերին լրատվամիջոցներով մեր քաղաքական գործիչների՝ միմյանց ուղղված ուղերձները պտտահողմերի երեւույթն ունեն, որ մի քանի րոպե անասելի ավերմունք են գործում եւ անհետանում: Փոխադարձ մեղադրանքներ, փոխադարձ կոմպրոմատներ՝ առայժմ էպիստոլյար ժանրի մեջ: Դեռ ոչ ոք չի կանգնում եւ ուղիղ մյուսի երեսին ասում, թե իրականում ինչ է մտածում նրա մասին: Գագիկ Ծառուկյանի մամլո գրասենյակի նախորդ օրը տարածած հաղորդագրության երկու առանցքային հատվածը բրյուսելյան հանդիպումների մասին, թե՝ «Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ **Ալեխո Վիդալ Քվադրաս Ռոկան** նշել է, որ առաջիկա նախագահական ընտրություններում Գագիկ Ծառուկյանը կարող է հիանալի թեկնածու լինել, քանզի առանձնանում է մարդկային ու լավատեսական հատկանիշներով», եւ «Անկաշկանդ շփման ընթացքում Գագիկ Ծառուկյանը կարծիք է հայտնել, որ անհնար է երկրում պայքարել կոռուպցիայի դեմ, եթե հիմնական կոռումպացված անձինք են այդ պայքարը ղեկավարում», բավական կոշտ արձագանքի է արժանանում իշխանամերձ շրջանակում: Այս իրավիճակը գնալով մի փոքր անհասկանալի է դառնում այն պարագայում, երբ խաղը դիտարկում ես նույն շրջանակի ներքին պայմանավորվածությունների մեջ: Այսինքն ի՞նչ՝ ամեն բան լրջանո՞ւմ է, իսկապես փոխադարձ մրցակցությունը տեղ ունի՞ ՀՀԿ-ԲՀԿ հարաբերություններում, թե ինչպես տեսակետ կա, այնուամենայնիվ, իմիտացիոն է ամեն ինչ: Ու երբ երեկ Ազգային ժողովի փոխնախագահը նյարդային արձագանքեց բրյուսելյան հաղորդագրությանը՝ կասկածը մեծացավ, թե կամ խաղն է դուրս գալիս վերահսկողությունից, կամ էլ կողմերից մեկը, կամ էլ, ինչու չէ, երկուսն էլ փոխադարձ պայմանավորվածություններ են խախտել, ուրեմն: Այլապես ինչո՞ւ պետք է Էդվարդ Շարմազանովը այսպես սուր արձագանքեր ԲՀԿ հաղորդագրության կոռուպցիայի դեմ պայքարողների վերաբերյալ հատվածին՝ այն անվանելով ներքին լսարանի համար պատրաստված թատերական ներկայացում ու ամոթ համարեր նման բովանդակությամբ հաղորդագրություն տարածելն իսկ ու «ամեն ինչ չէ, որ կարելի է ասել, ու դա արդարացված է»: Երեւի մեկ օր առաջ ԵԺԿ ի կարծիքը ԲՀԿ-ի մասին տարածումն էլ կարելի տեսնել այս համատեքստում, ինչպես ի դեպ այլ լրատվական «բոմբեր», դրանք պատկերում են օրվա քաղաքական խճանկարը. «Մենք չենք ասում չէ՞, որ շատ եվրոպացի պատգամավորներ ԲՀԿ-ն համարում են արհեստական ուժ, մենք չենք ասում, որ եվրոպացի շատ պատգամավորներ, ում հետ հանդիպել է ԲՀԿ ղեկավարը, նրա միջազգային քաղաքական գիտելիքները համարում են թույլ, մենք չենք ասում, որ ԲՀԿ-ն, ըստ Եվրոպայում առկա կարծիքի, հասել է որոշակի հաջողության պոպուլիստական քաղաքականության արդյունքում, մենք չենք ասում չէ՞, որ, ըստ մեր եվրոպացի գործընկերների՝ ԲՀԿ-ում ներքին ժողովրդավարություն չկա,: *Տես էջ 8*

## Ընթացիկ

# Դաշնակցությունն առաջարկում է միավորել ընդդիմադիր դաշտը

«Միասնական օրակարգ-նախագահական ընտրություններ»: Սա Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նախաձեռնած պլատֆորմի խորագիրն է, որն առաջարկում է միասնական ընդդիմադիր դաշտի ձեւավորում եւ ուղիներ, որոնց շնորհիվ երկիրը դուրս կգա ներկա իրավիճակից: Քաղաքական պլատֆորմը բաղկացած է յոթ կետից: Դրանք քաղաքական, իրավական, տնտեսական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ առաջարկություններ են:



ARMENPRESS

Յոթկետանոց քաղաքական պլատֆորմը Դաշնակցությունը քննարկել է խորհրդարանական բոլոր ուժերի հետ՝ բացառությամբ ՀՀԿ-ի: Բացառությամբ կոալիցիոն երկու կուսակցությունների՝ ՀՀԿ եւ ՕԵԿ, խորհրդարանական մնացյալ ուժերի ներկայացուցիչները երեկ «Էրեբունի պլազայում» մասնակցում էին քաղաքական պլատֆորմի քննարկմանը:

ՀՅԴ ԳՄ անդամ, ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Արմեն Ռուստամյանի** գնահատմամբ՝ առաջագա նախագահական ընտրությունները հասարակության շրջանում ակնկալիքների առումով նվազագույն մակարդակի վրա են: Ըստ Ռուստամյանի՝ հենց վստահության նվազման աստիճանով է պայմանավորված միասնական ընդդիմադիր դաշտի ստեղծումը: «Որեւէ ուժ չի տիրապետում այն վստահությանը, որ կարողանա միայնակ հասնել արդյունքի», ասաց Ռուստամյանը՝ հավելելով, որ այսօր պետությունն օտարված է ժողովրդից, եւ պետությունն ու իշխող կուսակցությունը նույնացվել են: Ռուստամյանն առաջարկում է ընդդիմադիր դաշտի միասնականության եւ ներկայացված ճանապարհային քարտեզի վերաբերյալ տեսակետները համաձայնեցնել ու շարժվել մեկ ուղղությամբ՝ կուլիսային խարդավանքից դուրս մթնոլորտում:

**Կարապետ Ռուբինյանի** գնահատմամբ՝ Դաշնակցության ներկայացրած փաստաթուղթը հավասարակշռված է եւ կարող է լավ հիմք հանդիսանալ քաղաքական ուժերի համախմբման համար: Սակայն Ռուբինյանին անհանգստացնում է փաստը, թե անգամ միասնական թեկնածուով ինչպե՞ս է հնարավոր լինելու պայքարել փողի դեմ: Ռուբինյանը երաշխիքներ է պահանջում, նախ, որ արդար մրցակցություն լինի, երկրորդ՝ որ միասնական թեկնածու ընտրվելուց հետո պահի խոստումն ու չշեղվի ճանապարհային քարտեզից:

«Ժառանգության» առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանը** փաստաթուղթը համարում է բեկումնային եւ խոստումնալից: Այն ընդունում է ամբողջությամբ, սակայն առաջարկում, որ ժամանակի ընթացքում կետերը բացվեն:

«Պատրաստ ենք աշխատել, քննարկել պլատֆորմն ու հարցերը», ասաց դաշնակցական **Արտեն Համբարձումյանը**:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից քննարկմանը ներկա էին Տիգրան Ուրիխանյանն ու Վահե Էնֆիաջյանը: Վերջիններս ոչ միայն ելույթ չունեցան, այլեւ քննարկման կեսից Արծվիկ Մինասյանից ներողություն խնդրեցին եւ հեռացան:

ՀՀՇ վարչության նախագահ, ՀԱԿ խմբակցության պատգամավոր **Արամ Մանուկյանն** էլ «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց, որ Դաշնակցության հետ կետերը քննարկվել են շատ բաց մթնոլորտում՝ ամենայն մանրամասնությամբ: Քննարկումը տեւել է շուրջ երեք ժամ: «Կետերի բովանդակությունից առավել մեզ դուր եկան կամքն ու ցանկությունը, որ հարկավոր է միասնական ճակատ, խնդիրների միասնական դրվածք, որը պետք է արդեն լինի ներկայիս քաղաքական իրավիճակին, եւ դա կարող է լինել այն հիմքը, որի շուրջը քաղաքական ուժերը կարող են համագործակցել: ՀԱԿ-ը կողմ է միասնական ծրագրին, այսօրվա մարտահրավերներն արձանագրելուն, եւ դրանք արձանագրելուց հետո միայն կհեշտանա միասնական թեկնածուի խնդիրը: Հարցը շատ ճիշտ է դրված՝ պրոբլեմի քննարկում, որից հետո քաղաքական ուժերը կարող են նստել եւ քննարկել այն անձի թեկնածությունը, որը կարող է այդ խնդիրները լուծել»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Զբոսաշրջության զարգացման միտում կա Վրաստանում եւ Հայաստանում

**«Ամերիա» խորհրդատվական ընկերությունը հետազոտություն է իրականացրել Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության եւ հյուրանոցային գործունեության ոլորտի վերաբերյալ: Պարզվել է, որ վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանում գրանցվել է հյուրանոցների ընդհանուր թվի կրկնակի աճ, բայց հյուրանոցային համարներում մահճակալների թիվն աճել է ընդամենը 1,4 անգամ: Այսինքն, ըստ ուսումնասիրության, Հայաստանում բացվել են շատ հյուրանոցներ՝ թվով քիչ սենյակներով:**

**Հետազոտության արդյունքները ցույց են տվել նաեւ, որ 2011-ին շուրջ 5,2 միլիոն մարդ է այցելել Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներ՝ գործարար, հանգստի կամ այլ նպատակներով: Վերջին 10 տարվա ընթացքում միջազգային ժամանումների բաղադրյալ միջին տարեկան աճի տեմպի (CAGR) ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը՝ 25,2 տոկոս, այնուհետեւ Հայաստանը՝ 16,7 տոկոս, ապա Ադրբեջանը՝ 10,5 տոկոս: «Այս ցուցանիշները վկայում են, որ զբոսաշրջիկության զարգացման միտում կա հատկապես Վրաստանում եւ Հայաստանում», նշված է ուսումնասիրության մեջ:**

**«Ամերիա» ՓԲԸ կառավարման խորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ Արման Փորսուղյանը նշել է, որ հետազոտությունն իրականացվել է միջազգային համբավ ունեցող մի շարք հետազոտական կենտրոնների՝ Colliers International, HVS Global Hospitality Services, Richard Cancellor եւ այլ ընկերությունների տրամադրած տվյալների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների եւ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրականացրած տարածաշրջանային հետազոտությունների արդյունքների հիման վրա:**

Ա. Մ.

# Նախարարը խուսափեց չարաշահումներ արածների անունները տալուց

**Երեկ կառավարության հերթական նիստում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը նշեց, որ բժշկասոցիալական փորձաքննություն հանձնաժողովում ավարտվել են կատարված ստուգումների արդյունքները եւ աշխատանքից ազատվել են հանձնաժողովի վեց անդամները: Նիստից հետո նախարարի հետ ճեպազրույցում լրագրողները խնդրեցին պարզաբանումներ տալ ու նշել անուններ: Սակայն նախարարը մանրամասներ չներկայացրեց, թե եղել են աղաղակող չարաշահումներ եւ գոնե կոնկրետ մեկ օրինակ չնշեց, որքան էլ լրագրողները պնդում էին:**

**Իսկ կոռուպցիոն ռիսկերի ու փաստերի մասին նախարարը լռեց՝ պատճառաբանելով, թե դա նախարարության լիազորությունը չէ, եւ իրենք չեն կարող բացահայտել: Սակայն գաղտնիք չէ, որ հաշմանդամության կարգ ստանալու, փոխելու եւ այլնի համար մշտապես կաշառք են վերցրել ոչ միայն հանձնաժողովի անդամները, այլեւ այդ կառույցի պատասխանատուները, որոնք դեռ շարունակում են աշխատել: Հարկ է, որ նախարարությունը ուսումնասիրի ու ստուգի վերջին 1,5-2 տարիներին քաղաքացիներին մերժված փաստաթղթերը, եւ շատ բան ջրի երես կգա: Իսկ մի համայնքից մյուս համայնք հանձնաժողովի անդամներին տեղափոխելը հարցի լուծում չէ: Այստեղ ձուկը գլխից է հոտած:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ԽԻՍՏ ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

# Վերջին թռիչքը

*Կարինե Ղազինյանի հիշատակին*



**Կայծակի նման իջավ բոթը՝ 57 տարեկանում ԱՄՆ-ում, վիրահատության ժամանակ, թե դրանից հետո ստեղծված բարդություններից մահացել է դեսպան Կարինե Ղազինյանը, նա ով այնքան կենսախինդ էր, ամենատխուր պահերին անգամ՝ հումորով լի: Դժվար է հավատալ, որ սա տեխնիկական վրիպակ չէ. օրեր առաջ աշխարհի ամենազարգացած երկրի բժիշկները չկարողացան փրկել սիրելի Ֆլորա Մարտիրոսյանին, հիմա էլ՝ Կարինե Ղազինյանին:**

**Ուժեղ կին էր. ամուսնու՝ 1997-ին Ռումինիայում իր աշխատավայրում հանկարծամահ եղած ՀՀ 44-ամյա դեսպան Գեորգի Ղազինյանի մահվան բոթը մեզ՝ լրագրողներիս էր շփոթեցրել, իսկ ինքը սեպտեմբերին կամքի ուժ էր գտել ՀՀ կառավարության՝ Ռումինիայում ՀՀ դեսպանի իրեն վստահած բարձր պաշտոնը ստանձնել մեծ պատասխանատվությամբ՝ հաղթահարելով անձնական դժբախտության իրեն բաժին ընկած կորստի ցավը:**

**Նա հմայիչ էր եւ հպարտ, բնածին դիվանագետ էր, թեպետ միշտ շեշտում էր՝ «ամուսնուս հետ անցկացրած 20 տարիներն են ինձ սովորեցրել իսկական դիվանագիտություն», իսկ 2009-ին, երբ Գերմանիայից հրաժեշտ էր տալիս, մեզ տված հարցազրույցում ընդգծեց՝ «բեռլինյան տարիներն ինձ համար իսկական դիվանագիտական դպրոց դարձան՝ զինելով նոր գիտելիքներով, նոր հմտությամբ, դառնալով կյանքի դպրոց»: Գերմանացիները «շատ հմայիչ»-ի կողքին անընդհատ շեշտում էին՝ «նախաձեռնող» է: Կարեւորագույն պայման էր սա իր հաջող առաքելության, որ Գերմանիայում աշխատած տարիներին կարողացավ ապացուցել ու փաստել անընդհատ: Շատ ճկուն էր, եռանդուն, նոր բան սկսելու պատրաստակամ, ի շահ Հայաստանի եռանդը կրկնապատկվում էր: Երեկոյան լողում էր, թե առավոտ կանուխ վազում, ճաշի ու ընթրիքի մասնակցում, միեւնույն է՝ սա դիվանագիտական աշխատանքի մաս էր կազմում իր համար՝ ասում էր՝ յուրաքանչյուր հաղորդակցություն կարեւոր է, երբ Հայաստանն ես ներկայացնում: Նրա շարժուձեւի, վարքագծի, ջերմ խոսքի, հոգատարության, ճաշակի, գրագիտության հիմքում մշտապես ընդգծված ընտանեկան դաստիարակության, Կրոյան-Ղազինյան ազգանունների ներկայություն կար:**

**«Առավոտ կանուխ առցանց կարդում էր հայրենական եւ միջազգային մամուլը, տեղյակ էր ամեն ինչին, առանձնահատուկ սեր ուներ տպագիր խոսքի, դասական երաժշտության, արվեստի հանդեպ: Լրագրողներին մի առանձնահատուկ սիրով էր ընդունում, ըմբռնում նրանց գործի կարեւորությունը: Նա օրն այնպես էր կառուցում, որ ոչինչ, եւ որ ավելի դժվար՝ որեւէ մեկին չմոռանա: Կարեւորագույն առիթներով՝ մեծ շռայլություն էր անում՝ ձեռագիր բացիկներով ջերմացնելով մտերիմներին: Հպարտ էր, որ Հայաստան երկիրն է ներկայացնում, տառապում էր՝ «դեսպանությունը Բեռլինի կենտրոնում պիտի լինի, որ կենտրոնում լինենք, մեզ լավ կճանաչեն»: Բեռլինում Նուսբաումալլե 5 հասցեում տեղակայված ՀՀ դեսպանության գեղեցիկ շենքը նրա անդուլ ջանքերի արդյունքն է: Ինքը միշտ կենտրոնում էր՝ սիրուն շալն ուսից անպակաս, պայծառ ժպիտը դեմքին, բոլոր դժվար հարցերը արագ լուծելի էր դարձնում, չոր պատասխաններն արագ փափկում էին նրա նրբագետ խոսքին ընդառաջ, իսկ կնճիռների համար հատուկ արդուկ ուներ՝ պայծառ ժպիտն ու բայազետցուն հատուկ կողմերին հաշտեցնելու, անկյունները կլորացնելու բնածին վարպետությունը: Եվ մի մագնիս, որ իր շուրջն էր խմբում Հայաստանի վարկանիշը մտավոր կարողություններով բարձր պահելու պատրաստակամ համախոհների:**

**Դեմքն ինչպե՞ս էր փոխվում, երբ մեծ բեմում իր երկրի տաղանդների ելույթին էր հետեւում: Կարծում եմ, այն արտիստները, ովքեր մեկ անգամ գոնե վայելել են նրա ընկերակցությունը, մեծ ափսոսանք ու ցավ են ապրում այդպիսի թիկունք կորցնելու փաստից: Մեր հպանցիկ զրույցում Բոխումի Ռուր համալսարանին կից «Սփյուռք եւ ցեղասպանություն» գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Միհրան Դաբաղը, հիշելով Կարինե Ղազինյանին, փոխանցեց. «Շատ հուզվեցա՝ տիկին Ղազինյանի անժամանակ մահվան բոթը լսելով: Իր հետ միշտ մեծ հաճույքով գործակցած եմ, մեկն էր, որ գիտեր լսել, խորհրդակցիլ եւ ընտրել հարմարագույնը, լավագույնը: Նա Հայաստանի հանդեպ համակրանք էր ստեղծում, դառնում դրա կրողն իր վերաբերմունքով, շարժուձեւով, խոսքով: Տիկին Ղազինյանը կրցավ Հայաստանի եւ Գերմանիո կապերը դրական կերպով զարգացնել»:**

**Մեր զրույցներից մեկում Կարինե Ղազինյանը կին քաղաքական գործչի երկու իդեալ էր նշել՝ Ալեքսանդրա Կոլոնտա՝ «Խորհրդային Միության դեսպանը» ֆիլմից, եւ Մարգարիտ Թետչեր: Մեզ համար ինքն է՝ կանացի աննահանջ հմայքով, գաղտնիքը՝ շալի տակ, գործը՝ տեսանելի:**

**Թռիչքների պատրաստ էր, քանի որ վայրէջքն անփոփոխ էր՝ Հայաստանի Հանրապետություն, որի հողն, ինչքան էլ անժամանակ համարենք, այս անգամ գրկելու է այնպես ամուր, որպես արդարացում խոստովանելով՝ հարստացնում է իր դատարկվող ընդերքը:**

**Մեր ցավակցություններն իր զավակներին՝ Իշխանին եւ Լուիզային, Կրոյաններին, Ղազինյաններին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

*«Ազգ»-ի խմբագրությունը միանում է ցավակցություններին:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Շրջայց «Արաքս թռչնաֆաբրիկայով»





Սպառողների շահերից ելնելով՝ «Սպառողների ասոցիացիա» կազմակերպությունը նախաձեռնել է կազմակերպել այցեր դեպի Հայաստանի թռչնաֆաբրիկաները, որտեղ ինչպես սննդի անվտանգության ոլորտի մասնագետները, այնպես էլ լրագրողները կծանոթանան պայմաններին, որոնցում ստացվում է թռչնարտադրանքը եւ մատակարարվում բնակչությանը:

«Սպառողների ասոցիացիայի» կազմակերպած առաջին այցը դեկտեմբերի 5-ին էր դեպի «Արաքս թռչնաֆաբրիկայի» գլխամաս: Բայց մինչ թռչնաֆաբրիկա հասնելը լրագրողները ճանապարհին մի քանի խանութներում փոքր զննում կատարեցին՝ տեսնելու համար, թե ինչ պայմաններում են պահվում ու վաճառվում հավի միսն ու հավկիթները:

Առաջին խանութում հավկիթները դրված էին ցուցադարակներում, ինչն առաջին հայացքից թվաց նորմալ եւ անվտանգ, բայց երբ տեղեկացանք, թե հավկիթները, ըստ նորմայի, ի՞նչ ջերմաստիճանում ու պայմաններում պետք է պահվեն, պարզ էր՝ խախտումները նույնիսկ անթաքույց են կատարվում:

Մեր այցելած առաջին խանութը, որտեղ հավկիթները դրված չէին սառնարանում, ջեռուցվում էր օդորակիչով, ու ներսում բավականին տաք էր, այնինչ ձուն կարելի է պահել առավելագույնը մինչեւ +10 աստիճան ջերմաստիճանում: Իսկ գնողն ինչպե՞ս իմանա խանութի ջերմաստիճանը մանավանդ ամռան շոգին, երբ դրսում ավելի քան 38 աստիճանի հասնող շոգ է, իսկ չհովացվող խանութներում՝ միգուցե մի քիչ ավելի կամ պակաս:

Մեր այցելած երկրորդ խանութում հավկիթները թեեւ սառնարանում էին, սակայն դժվար էր հասկանալ՝ աշխատո՞ւմ էր սառնարանը, թե՞ ոչ:

«Սպառողների ասոցիացիայի» նախաձեռնությանը միացած բժիշկ-հիգիենիստ **Ջեյմս Ստեփանյանը** բացատրում է, որ խանութի սառնարանը պետք է ունենա ջերմաչափ, ինչը, սակայն, չտեսանք, բացի դրանից՝ կաթնամթերքը, մսամթերքը եւ հավկիթները դրված էին նույն սառնարանում, ինչը, ըստ Ջեյմս Ստեփանյանի, կոպիտ խախտում է, քանի որ այդ մթերքները պետք է պահվեն առանձին սառնարաններում: Մասնագետի խոսքով՝ մսամթերքն ու կաթնամթերքը պետք է պահվեն սառնարանային այլ ջերմաստիճանում, իսկ հավկիթները՝ այլ: Մեկ այլ կոպիտ խախտում էր հավկիթների լղոզված մակնշումը: Մակնշումը ձվերի վրա թեեւ կար, սակայն հասկանալի չէր, ինչը, Ջեյմս Ստեփանյանի կարծիքով, պակաս վատ չէ, քան ընդհանրապես չմակնշելը: Շատ կարեւոր է, որ գնորդն անպայման ստուգի մակնշումը, որը ցույց է տալիս հավկիթի արտադրման օրը, հետո նոր գնի արտադրանքը: Իսկ արտադրման օրվանից հետո ձուն կարելի է օգտագործել մինչեւ 25 օրվա ընթացքում: Ընդհանրապես 5-7 օրվա հավկիթը համարվում է դիետիկ, իսկ 7-րդ օրվանից հետո համարվում է սեղանի ձու:

Մեր այցելած խանութների վերաբերյալ նաեւ ավելացնենք, որ երկուսում էլ վաճառողները հիգիենայի ու կոնկրետ հավկիթների անվտանգության նորմերից անտեղյակ էին, ու նման երեւույթ առկա է բազմաթիվ խանութներում:

Լրագրողներիս ու ոլորտի մասնագետների այցը «Արաքս թռչնաֆաբրիկա» սկսվեց ձվի տեսակավորման արտադրամասից, որտեղ գրեթե ամեն ինչն ավտոմատացված է: Հենց թռչնանոցներից ձվերը շարժասանդուղքներով տեղափոխվում են ձվի տեսակավորման արտադրամաս, եւ տեխնիկական հագեցվածությունը թռչնաֆաբրիկայում այնպիսին է, որ թռչնանոցներում, տեսակավորման ու պահեստավորման ընթացքում էլ մարդու ձեռքը հավկիթներին չի դիպչում: Ձվի տեսակավորման արտադրամասում սկզբում առանձնացվում են կեղտոտ ու ճաքած ձվերը, որպեսզի դրանք չհասնեն սպառողին:

Եթե ձվի 1,8-րդ մասը կեղտոտ է, ապա դա համարվում է կեղտոտ ձու եւ չի կարելի վաճառել: Կեղտոտ ու ճաքած հավկիթները թույլատրելի է իրացնել միայն մի օրվա ընթացքում, այն էլ միայն արդյունաբերական նպատակների համար: Օրինակ՝ «Արաքս թռչնաֆաբրիկայում» կեղտոտ ու ճաքած ձվերն ուղարկվում են հենց նույն ընկերությանը պատկանող կիսաֆաբրիկատների արտադրամաս եւ օգտագործվում են միայն ներքին կարիքների համար ու ոչ մի դեպքում չեն հանվում վաճառքի:

«Արաքս թռչնաֆաբրիկայի» ձվի տեսակավորման արտադրամասում ականատես եղանք, թե ինչպես են հավկիթներն անցնում տեսակավորող ու մակնշող սարքավորումների միջով, եւ այդ ընթացքում էլ մարդկային ձեռք արտադրանքին չի դիպչում, ինչը սննդի եւ անվտանգ արտադրանք ստանալու համար անհրաժեշտ նախապայման է: Այստեղ սարքավորումները հավկիթներն առանձնացնում են ըստ քաշերի, ինչից հետո հավկիթները մակնշվում են:

Ի տարբերություն խանութներում վաճառվող շատ հավկիթների լղոզված ու անհասկանալի մակնշման՝ «Արաքս թռչնաֆաբրիակայի» հավկիթների մակնշումը նորմալ ընթեռնելի է, ինչը գնողի համար անհրաժեշտ երաշխիք է:

Տեսակավորման արտադրամասում մակնշումից հետո դարձյալ սարքավորումների միջոցով հավկիթները տեղափոխվում են ձվաբնիկներ, այնուհետեւ աշխատակիցները տեղավորում են արտադրանքը արկղերի մեջ ու պահեստավորում: Հավկիթների պահեստում ջերմաստիճանը թեեւ պահպանված էր նորմայի սահմաններում՝ մինչեւ +10 աստիճան, սակայն պահեստում արտադրանքը երկար պահելու կարիք չի լինում, քանի որ անընդմեջ սպառման պահանջարկ կա:

Ներկայումս «Արաքս թռչնաֆաբրիկան» արտադրում է ընդհանրապես Հայաստանում արտադրվող հավի մսի ու ձվի շուրջ 30 տոկոսը:

«Արաքս թռչնաֆաբրիկայի» գլխավոր տնօրեն **Գագիկ Մակարյանը** նույնիսկ նշում է՝ չեն եղել դեպքեր, որ ֆաբրիկայի հավկիթները չվաճառվեն ու հնանան խանութներում, դրանք միշտ վաճառվում են ժամկետի ընթացքում: «Եթե գտնենք ժամկետանց արտադրանք, ապա անմիջապես հետ կվերցնենք: Կարծում եմ՝ ժամկետանց ձուն պետք է ոչնչացվի», ավելացրեց Գագիկ Մակարյանը:

Արտադրանքի ապահովության համար, բնականաբար, երաշխիք է նաեւ թռչունների հիվանդություններից անմասն լինելը: «Արաքս թռչնաֆաբրիկայի» գլխավոր անասնաբույժ **Աղասի Բաղդասարյանի** փոխանցմամբ՝ բարեբախտաբար իրենց թռչնաֆաբրիկայում թռչունները զերծ են հիվանդություններից, քանի որ առաջին հերթին՝ թռչնաֆաբրիկայում պահպանված են սանիտարական ու հիգիենիկ նորմերը, երկրորդն էլ՝ ըստ պլանային գրաֆիկի՝ թռչունները պատվաստվում են վարակիչ հիվանդությունների դեմ: Գլխավոր անասնաբույժը կարեւորում է նաեւ, որ թռչնաֆաբրիկայի աշխատակիցները բուժզննում անցնեն. «Կոնկրետ մեր աշխատակիցները բուժզննում անցնում են 6 ամիսը մեկ, եւ ամեն մեկն ունի իր սանիտարական գրքույկը»:

Քանի որ «Արաքս թռչնաֆաբրիկան» զբաղվում է նաեւ հավի մսի արտադրությամբ, եւ նրա արտադրած մսամթերքը լայն սպառում է գտնում շուկայում, ուստի կարեւոր էր, որ տեսնեինք նաեւ հավի մսի արտադրման ընթացքը: Թռչնաֆաբրիկայում թռչունները 36-40 օրականում արդեն տեղափոխվում են սպանդի արտադրամաս, որտեղ էլ տեսակավորվում են, մաքրվում, փաթեթավորվում եւ այլն:

Գագիկ Մակարյանը նշում է, որ գնորդներն ուշադիր լինեն հավերի ժամկետներին, որոնք փակցված են լինում արտադրանքի վրա: Հետեւելով ժամկետներին ու պահպանման պայմաններին՝ սպառողն իր ուշադրությամբ ու պահանջներով կարող է շատ բան փոխել ինչպես գնորդների հոգեբանության, այնպես էլ արտադրողի գործունեության մեջ:

«Արաքս թռչնաֆաբրիկայի» գլխամասում տեղակայված էր նաեւ ընկերության կիսաֆաբրիկատների արտադրամասը, որտեղ արտադրվում են նրբերշիկ, հավի աղացած միս, կոտլետներ եւ այլն: Այստեղ, բացի հավի մսից, կիսաֆաբրիկատներ պատրաստվում են նաեւ խոզի ու տավարի մսից: Ինչպես նշեց գլխավոր տնօրենը, գործընթացը, որը տեսանք թռչնաֆաբրիկայում, ամեն օր կատարվող աշխատանք է, ինչի շնորհիվ ընկերությունը ներկայումս արտադրում է օրական մոտավորապես 7 տոննա միս, եւ միայն «Արաքս թռչնաֆաբրիկան» արտադրում է օրական 200-210 հազար սեղանի ձու: «Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերության արտադրանքը ներկայացված է Երեւանում ու բոլոր մարզերում, նաեւ Լեռնային Ղարաբաղում:

«Մեր սկզբունքն է՝ «Առողջ սնունդ, առողջ ապագա», ու մենք անում ենք ամեն ինչ մեր սկզբունքը պահելու համար», նշում է Գագիկ Մակարյանը՝ միաժամանակ կոչ անելով սպառողներին զարկ տալ տեղական արտադրանքի սպառմանը, եւ առաջին հերթին նախընտրել տեղական որեւէ լավ արտադրանքը, հետո՝ ներկրվածը:

«Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ **Արմեն Պողոսյանը**, որը նույնպես շրջեց «Արաքս թռչնաֆաբրիկայի» արտադրամասերում, գնահատելով ընկերության աշխատանքը՝ նշեց, որ թռչնաֆաբրիկայում ակնհայտ են տեխնոլոգիական հագեցվածությունը, սանիտարական ու հիգիենիկ բավարար վիճակը եւ մասնագիտական մոտեցումը: Ի դեպ, թռչնաֆաբրիկայում հիմնականում կիրառվում են եվրոպական տեխնոլոգիաներ:

Թռչնաֆաբրիկաների գործունեության համեմատական պատկերն ունենալու եւ սպառողին իրազեկելու համար «Սպառողների ասոցիացիան» լրագրողների ու սննդի անվտանգության մասնագետների հետ շարունակելու է այցերը դեպի այլ թռչնաֆաբրիկաներ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ**

## Արտահերթ նիստ դեկտեմբերի 17-ին

**Ղեկավարվելով ՀՀ սահմանադրությամբ՝ կառավարությունը երեկ Ազգային ժողովի նախագահին առաջարկեց 2012 թ. դեկտեմբերի 17-ին ժամը 12-ին գումարել ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝ օրակարգում ընդգրկելով առաջնահերթ քննարկում պահանջող մոտ երկու տասնյակ հարց: Ինչպես տեղեկացրեց հարցը ներկայացնող կառավարության աշխատակազմի ղեկավար նախարար Դավիթ Սարգսյանը, դրանք հիմնականում երկրորդ ընթերցմամբ ընդունվելու անհրաժեշտություն ունեցող օրինագծերն են:**

## Պետեկամուտների կոմիտեի սպասարկման կետեր նաեւ «Հայփոստում»

**Պետական եկամուտների կոմիտեի եւ «Հայփոստի» միջեւ տնտեսվարող սուբյեկտների սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում համագործակցության պայմանագիր կնքելու առաջարկը երեկ հաստատվեց կառավարության կողմից: Ըստ պայմանագրի՝ «Հայփոստի» արդիականացված փոստային բաժանմունքներում տեղակայվելու են պետեկամուտների կոմիտեի սպասարկման կետերը, որտեղ սպասարկումն իրականացնելու են կոմիտեի աշխատակիցները՝ յուրաքանչյուր բաժանմունքում մեկ աշխատակից:**

## Կփոխվեն այլընտրանքային ծառայության ժամկետն ու ենթակայությունը

### *«Եհովայի վկաները» շարունակում են ընդդեմ Հայաստանի Հանրապետության դատական հայցերը*

**Կառավարությունը երեկ հավանություն տվեց «Այլընտրանքային ծառայության մասին» եւ «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքներում փոփոխություններին, որոնցով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու պատճառները:**

**Հարցը ներկայացնող արդարադատության նախարար Հրայր Թովմասյանն ասաց, որ դա պայմանավորված է 3 գործոններով՝ այլընտրանքային զինծառայության՝ զինվորական ծառայությունից երկար ժամկետ, այլընտրանքային ծառայության զինվորական ենթակայություն եւ այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի զինվորական ենթակայություն: Այս հանգամանքներով պայմանավորված՝ Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դեմ դատական վճիռներ են կայացվել, քանի որ այդ դրույթները համարվել են Եվրոխորհրդի սկզբունքներին հակասող:**

**Օրենքի նոր նախագծով այլընտրանքային ծառայության ժամկետները 36 եւ 42 ամիսների փոխարեն կդառնան 30 եւ 36 ամիս, այլընտրանքային ծառայությունը կանցնի ոչ զինվորական ենթակայությամբ, իսկ այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը կազմված կլինի ոչ թե միայն պաշտպանության նախարարության, այլեւ տարբեր նախարարությունների ներկայացուցիչներից:**

**Տեղեկացնենք, որ Հայաստանում ինչպես զինվորական, այնպես էլ այլընտրանքային ծառայությունից խուսափում են «Եհովայի վկաներ» տոտալիտար աղանդի անդամները, որոնք դրա համար ենթարկվում են քրեական պատասխանատվության, ապա այդ վճիռը բողոքարկում են Եվրոպական դատարանում: Պետական բյուջեն, այսինքն՝ մենք՝ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներս, այդ թվում նաեւ հիշյալ անձանց անվտանգությունն ապահովող իսկական զինվորական ծառայություն անցնողները, հարկադրված ենք լինում վճարել Եվրոպական դատարանի որոշմամբ մեզ պարտադրված տուգանքները ամեն տեսակ ծառայությունից խուսափող եւ իրենց բոլորից գերադասող «Եհովայի վկաների» տականքներին:**

## Շամամ Հարությունյանը՝ նախարարի տեղակալ

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Շամամ Հարությունյանը նշանակվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ:**

**Շամամ Հարությունյանը 1993-ից ղեկավար պաշտոններ է զբաղեցրել տարածքային տարբեր սոցիալական ծառայություններում: 2002-2012 թթ. զբաղեցրել է «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետի պաշտոնը եւ դեկտեմբերի 6-ին նշանակվել է նախարարի տեղակալ: Մ. Մ.**

# Վերլուծություն

# Սի Ցզինպին. Չինական զարգացման գալիք տասնամյակի առաջնորդը

*Քաղաքական դիմանկարի փորձ*

***Նոյեմբերի 15-ին Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի տասնութերորդ գումարման առաջին պլենումը Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար ընտրեց Սի Ցզինպինին: Չինական ղեկավարների «հինգերորդ սերնդի» առաջնորդը, որը միաժամանակ ստանձնեց Չինական Կոմկուսի Կենտկոմի Ռազմական խորհրդի նախագահի պաշտոնը, կգլխավորի Չինաստանը մինչեւ 2023 թ.: Այդ իրադարձությունից հետո անցած շաբաթների ընթացքում աշխարհի տարբեր երկրների վերլուծաբաններ եւ հետազոտողներ փորձել են հասկանալ եւ ձեւակերպել խնդիրների այն շարքը, որը կանգնած է Չինաստանի նոր ղեկավարի եւ չինական հասարակության առջեւ: Այս վերլուծականը մի փորձ է գնահատելու այդ ուսումնասիրությունները եւ ի մի բերելու հայ-չինական հարաբերությունների հնարավոր զարգացումների հեռանկարը:***



## Ինչպիսի՞ն կլինի չինական զարգացումը գալիք տասնամյակում

Աշխարհի ամենամեծ քաղաքական ուժի՝ Չինաստանի Կոմունիստական կուսակցության տասնութերորդ համագումարին Ամերիկայում, Եվրոպայում եւ Ռուսաստանում հետեւում էին մեծ ուշադրությամբ: Այդ հետաքրքրությունը միանգամայն հասկանալի է: Չինաստանն այսօր աշխարհի ամենադինամիկ զարգացող տնտեսությունն է: Երկրի քաղաքական ղեկավարությունը խնդիր է դրել գալիք տարիներին կերտել հարաբերական բարգավաճման եւ բարեկեցության հասարակություն: Այդ մասին Սի Ցզինպինը հայտարարել է իր ելույթում, խոստանալով բարձրացնել չինական հասարակության կենսամակարդակը: Արտասահմանյան դիտորդներն արձանագրում են, որ «հինգերորդ սերնդի» քաղաքական ղեկավարները արմատական փոփոխություններ երկրի արտաքին քաղաքական ուղեգծում չեն կատարելու եւ շարունակելու են զարգացման ու բարեփոխումների վերջին տարիների գիծը: Հիշեցնենք, որ 2000-ական թթ. կեսին Չինաստանում խնդիր դրվեց երկիրը դարձնել «համաշխարհային մասշտաբի տերություն»: Վերոհիշյալ համագումարի ձեւակերպած կարեւորագույն խնդիրներից առաջինը կոռուպցիայի դեմ պայքարն է, որը շարունակելու են իրականացնել խիստ ու վճռական մեթոդներով: Մյուս կարեւորագույն խնդիրը կարգապահության բարձրացումն է, առանց որի անհնար կլինի շարունակել երկնիշ ցուցանիշներով տնտեսական զարգացումը: Չինաստանն այսօր աշխարհի առաջատար տնտեսություններից մեկն է եւ իր ռազմավարական հարաբերություններում առաջին տեղը տվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, իսկ երկրորդ տեղում Ռուսաստանի Դաշնությունն է: Ընդ որում, ամերիկա-չինական հարաբերությունները մոտակա եւ ավելի մեծ հեռանկարի ընթացքում շարունակելու են կրել փոխգործակցության, փոխներգործության եւ մրցակցության բնույթ: Չինացիները ձեռք են բերել մեկ տրիլիոն դոլարից ավելի գումարի ամերիկյան ակտիվներ, իսկ չինական ոսկու եւ տարադրույթի պահուստի ճնշող մասը ամերիկյան դոլարով է: Չինաստանն աշխարհի խոշորագույն արտադրողն է, իսկ ԱՄՆ-ն՝ խոշորագույն սպառողը, միաժամանակ չինական տնտեսության մեջ խոշորագույն ներդրողը: Չին-ամերիկյան առեւտրա-տնտեսական հարաբերությունների ընդհանուր ծավալն անցյալ տարի գերազանցել է 400 մլրդ դոլարը եւ աճելու շարունակական միտում ունի: Վերլուծաբանները կանխատեսում են չին-ամերիկյան մրցակցության արդյունքում լարվածության աճ, որը կարող է դրսեւորվել աշխարհի տարբեր մասերում, օրինակ՝ Աֆրիկայում կամ Լատինական Ամերիկայում: Ուշագրավ է նաեւ, որ Չինաստանն արտակարգ կարեւորել է համագործակցությունը Ռուսաստանի հետ ոչ միայն իբրեւ հումք արտահանող գլխավոր երկրի, այլ նաեւ իբրեւ ամենահեռանկարային գործընկերոջ Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության շրջանակներում: Բոլոր փորձագետների գնահատմամբ՝ հենց այս տարածաշրջանն է լինելու գալիք տասնամյակում աշխարհի ամենադինամիկ տնտեսական զարգացման տարածքը:

## Չինաստանի առաջնորդի քաղաքական դիմանկարի ուրվագծեր

Սի Ցզինպինը ծնվել է 1953 թ. Շանսի նահանգում: Նրա հայրը՝ Սի Չժունսյունը, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադիր-հայրերից մեկն է, նշանավոր հեղափոխական եւ ականավոր պետական գործիչ, որը ժամանակին զբաղեցրել է Չինաստանի փոխվարչապետի պաշտոնը: «Կուլտուրական հեղափոխության» տարիներին նա հեռացվել է պաշտոնից, 1962 թ. ռեպրեսիայի է ենթարկվել եւ ընտանիքով հեռացել է հեռավոր գավառներից մեկը: Այնպես որ էլիտար դպրոցում սովորել սկսած Սի Ցզինպինն այնուհետեւ ճաշակել է հեռավոր բնակավայրի հասարակ մարդկանց կյանքի բոլոր դառնությունները եւ դպրոցն ավարտել է այն ժամանակների համար ավելի քան համեստ միջավայրում: Չնայած դրան, նա ռեպրեսիաների ալիքի թուլացման պայմաններում կարողացել է ընդունվել ՉԿԿ շարքերը, նաեւ ընդունվել Ցինխուա համալսարանի քիմիական-տեխնոլոգիական ֆակուլտետ: Դա մի բարձրակարգ բուհ էր, որի շրջանավարտներն են եղել շատ նշանավոր չինական ղեկավարներ: 1978 թ. Սի Չժունսյունին ամբողջությամբ ռեաբիլիտացրին եւ արդարացրին, եւ դա հնարավոր դարձավ չինական բարեփոխումների ճարտարապետ Դեն Սյաոպինի կողմնակիցների իշխանության գալուց հետո: Այնպես որ Սի Ցզինպինն իրավամբ համարվում է Դեն Սյաոպինի գծի իրավահաջորդներից մեկը: Չինաստանի նոր ղեկավարը փայլուն կրթություն է ստացել եւ անցել է կուսակցական աշխատողի բոլոր աստիճաններով, պաշտոնավարելով ամենատարբեր քաղաքներում եւ գավառներում: Վերլուծաբանները ուշադրություն են դարձրել, որ նրա քաղաքական առաջընթացը հնարավոր է եղել կուսակցության գծին բացառիկ նվիրվածության, ինչպես նաեւ իր բոլոր պաշտոններում ցուցաբերած արտակարգ բանիմացության շնորհիվ: Օրինակ, նշվում է, որ այնտեղ, որտեղ պաշտոնավարել է Սի Ցզինպինը, կարճ ժամանակում արձանագրվել են տնտեսական աճի տպավորիչ ցուցանիշներ եւ որպես դրա արդյունք՝ մեծացող հարգանք կուսակցական եւ հասարակական միջավայրում: Նա իրավաբանական գիտությունների դոկտոր է եւ ունի գաղափարախոս-գործչի կայուն համբավ: Չինաստանի նոր առաջնորդ դառնալու նրա իրական հնարավորության մասին առաջին անգամ սկսել են խոսել յոթ տարի առաջ, երբ նա դարձել է Կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի ինը մշտական անդամներից մեկը: Ուշագրավ է, որ Սի Ցզինպինի ակնառու արժանիքներից մեկը կուսակցական շրջապատը համարել է կուսակցության միասնության եւ համախմբման համար նրա գործադրած անդուլ ջանքերը: Արեւմտյան դիտորդները ուշադրություն են դարձրել նրա բնավորության հետեւյալ գծերին. հանդարտություն, հավասարակշռություն, լսելու եւ շփվելու բարձր կուլտուրա, ձեւավորված, կայուն եւ հաստատակամ բնավորություն: Նրա քաղաքական դիմանկարը պատկերած վերլուծաբաններից մեկն ասել է, որ նա «շփման մեջ զուսպ է, բարեկիրթ եւ կարողանում է գրավել զրուցակիցների համակրանքը: Երբեք չի կորցնում ինքնատիրապետումը եւ հասարակության մեջ իրեն պահում է մեծ արժանապատվությամբ, երբեք թույլ չտալով կտրուկ արտահայտություններ»: Դիտորդները կարծում են նաեւ, որ նոր գլխավոր քարտուղարի ընտրությունը խորհրդանշում է չինական ղեկավարության մեջ ավանդաբար ձեւավորված մի քանի խմբավորումների փոխհամաձայնությունը եւ լիակատար համագործակցությունը: Սի Ցզինպինն ամուսնացած է, ունի մեկ դուստր: Կարեւոր է իմանալ, որ իբրեւ քաղաքական գործիչ նա աճել է արեւելյան ափամերձ նահանգներում, եւ նրա աշխարհայացքը ձեւավորվել է այդ տարածքներում «Չինական հրաշքի» տարիներին գրանցված տնտեսական բուռն զարգացման մթնոլորտում: Չինաստանի հասարակությունը լավատեսորեն ակնկալում է, որ Սի Ցզինպինը գալիք տասնամյակում իրեն կառաջնորդի դեպի բարգավաճում եւ տնտեսական զարգացում:

## Հայ-չինական կապերը 2500 տարեկան են

Պատմաբանները հակված են կարծելու, որ Հայաստանի եւ Չինաստանի միջեւ հնագույն կապերը վերաբերում են Քրիստոսից առաջ 4-րդ դարին: Չինաստանում շատ բարձր են գնահատում պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ առկա տեղեկությունները Ճենաց աշխարհի մասին: Հավասարապես բարձրարժեք են նաեւ Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույցի» մեջ պարունակվող տեղեկությունները Չինաստանի բնական եւ ձեռակերտ հարստությունների մասին, որոնք վկայում են, որ վեց-յոթերորդ դդ. մեր ժողովուրդների միջեւ աշխույժ շփումներ են եղել, որոնց արդյունքում էլ հայերն այդքան լավ եւ մանրամասն տեղեկություններ ունեին հեռավորարեւելյան հսկայի մասին: Կիլիկիայի Հեթում պատմիչը մանրամասն նկարագրել է չինացիների կյանքը եւ սովորույթները: Մարկո Պոլոյի ժամանակակից, հայ Անտոն անունով ճանապարհորդն ու վաճառականը առաջիններից մեկն է Չինաստանից Եվրոպա բերել մետաքսի պատրաստման եւ տպագրության գաղտնիքները: Հայերը Չինաստանում բոլոր քրիստոնյաներից առաջինն են իրավունքներ եւ արտոնություններ ստացել եւ առաջինն են Չինաստանում քրիստոնեական եկեղեցի կառուցել: Չինաստանի մասին գրել են մեր մշակույթի շատ մեծեր, իսկ «Ազգասեր» եւ «Ազգասեր Արարատյան» թերթերի խմբագիր Մեսրոպ Թաղիադյանն ուղղակի գովերգել է չինական կենցաղավարության եւ աշխարհայացքի արժանիքները:

Չինաստանում հայ համայնքի իսկական զարթոնք է արձանագրվել 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Պատմական այս իրողությունները հիմա տարբեր երկրներում ապրող մեր հայրենակից հետազոտողների ուշադրության կենտրոնում են, որոնք անընդհատ նորանոր դրվագներով հարստացնում են մեր գիտելիքը երկկողմ հարաբերությունների մասին: 1992 թ. Հայաստանի եւ Չինաստանի միջեւ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, եւ այդ տարի առեւտրա-տնտեսական հարաբերությունների ծավալը կազմել է 370 հազար ԱՄՆ դոլար: 2011 թ. երկկողմ առեւտրի ծավալը կազմել է 421 մլն դոլար, որից 16 մլն-ը Հայաստանից արտահանման ծավալն է: Հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման քսանամյակի առիթով անցած տոնակատարության ժամանակ Հայաստանի փոխարտգործնախարար **Սերգեյ Մանասարյանը** լավատեսորեն համոզմունք է հայտնել, որ այս տարի երկկողմ ապրանքաշրջանառության ծավալը կգերազանցի 500 մլն դոլարը: Այսպիսով, Չինաստանը Եվրոմիությունից եւ Ռուսաստանից հետո Հայաստանի երրորդ առեւտրա-տնտեսական գործընկերն է, իսկ եթե վերցնենք իբրեւ առանձին պետություն՝ երկրորդն է Ռուսաստանից հետո: Վերլուծաբանները ուշադրություն են դարձնում, որ Չինաստանի հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ օբյեկտիվորեն մեծանում է: Այսպես, չինացիները հայտարարել են մոտակա տարիներին Վրաստանում ավելի քան 1 մլրդ դոլարի ներդրումներ կատարելու պատրաստակամության մասին: 2011 թ. Ադրբեջանի հետ չինական տնտեսական կապերը գնահատվել են ավելի քան 620 մլն եվրո:

Չինաստանում շատ մեծ հարգանքով են արտահայտվում համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի նշանակալից ներդրման մասին, եւ մեր երկկողմ հարաբերությունների մասին խոսելիս օգտագործում են «աշխարհի հնագույն երկու ժողովուրդներ» ձեւակերպումը: Չինաստանում ամենահայտնի հայը 20-րդ դարի աշխարհի մեծագույն կոմպոզիտորներից մեկն է՝ Արամ Խաչատրյանը, ում «Սուսերով պարը» մշտապես հնչում է հեռուստատեսությամբ եւ ռադիոալիքներով: Թե՛ ռուսաստանաբնակ, թե՛ ամերիկաբնակ վերլուծաբանները, ուսումնասիրելով հայ-չինական կապերի զարգացման հնարավորությունները, արձանագրել են, որ կան բոլոր նախադրյալները տնտեսական համագործակցության նոր որակի մասին կանխատեսումներ անելու համար: Համացանցերում շատ են կանխատեսումները, որ, մասնավորապես, հասունացած է երկկողմ համագործակցության հնարավորությունը ռազմարդյունաբերական եւ ռազմատեխնիկական ոլորտներում: Մեր երկրում մեծանում է Չինաստանով հետաքրքրվողների թիվը ոչ միայն մանր եւ միջին ձեռնարկատերերի շրջանում, այլ նաեւ՝ պատանիների ու երիտասարդների, ովքեր կուզենային մասնակցել Չինաստանում իրականացվող զանազան կրթական ծրագրերի:

Չինաստանը ԱՄՆ-ի, Եվրոպական միության եւ Ռուսաստանի Դաշնության հետ ժամանակակից աշխարհակարգում անվիճելի չորս ուժային կենտրոններից մեկն է: Ֆինանսական վերլուծաբանները կարծում են, որ նաեւ Չինաստանի վրա է ընկած 2012-2015 թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքի հաղթահարման պատասխանատվության զգալի մասը:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
Քաղաքական վերլուծաբան,
Բանասիրական գիտությունների թեկնածու

# Իսկ ինչո՞ւ չընդառաջել, որ Բաքուն «ճզմվի մուրճի եւ սալի արանքում»

Vesti.az-ը հրապարակել է ոմն Այդին Մելիք-Միրզոեւի «քաղաքագիտական վերլուծությունը»: Այն հոգեխանգարմունքի ակնհայտ դրսեւորում է: Հեղինակի կարծիքով, Ադրբեջանը «պետք է շահագրգռված լինի Իրանի թուլացմամբ եւ Ռուսաստանի մասնատմամբ, բայց աշխատի զգույշ, առավելապես՝ ուրիշի ձեռքերով»:

Ո՞րն է «քաղաքագետի»՝ Ադրբեջանին հարեւան երկու երկրների հանդեպ շիզոֆրենիկ ատելության պատճառը: Միայն այն, որ, ըստ Մելիք-Միրզոեւի, «Հայաստանը նրանցից օժանդակություն է ստանում»: Այսինքն, Ադրբեջանի գերխնդիրը Հայաստանի «թուլացումն է, որպեսզի այնտեղ տնտեսական փլուզում լինի, արտագաղթը ահագնանա»: Բաքվի քարոզչամեքենայի այս «պտուտակի» հայացքով, այդ դեպքում «հայկական կողմից ադրբեջանական բանակին դիմադրող չի գտնվի»:

Իր «կապույտ երազանքն իրականացած տեսնելու» մղումով ադրբեջանցի «քաղաքագետը» մտասեւեռվում է Սիրիայի վրա, որտեղ «ցանկալի է լինի խամաճիկային, անողնաշար կառավարություն, որը ԱՄՆ-ին եւ Թուրքիային կարտոնի իր տարածքում ռազմահենակայաններ տեղաբաշխել, որպեսզի նրանք արեւմուտքից մոտենան Իրանին, իսկ դրանից հետո կգա Իրանի հերթը»:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա Մելիք-Միրզոեւը ցանկանում է «տնտեսական դժվարություններ, որպեսզի հայ աշխատանքային միգրանտները չկարողանան Հայաստան տրանսֆերտներ առաքել»: Նա գտնում է, որ այդ դեպքում կտուժեն նաեւ միլիոնավոր ադրբեջանցիներ, որ նույնպես Ռուսաստանում են վաստակում, բայց «նավթով եւ գազով հարուստ Ադրբեջանի համար ավելի հեշտ կլինի հաղթահարել սոցիալական դժվարությունները», իսկ Հայաստանը «կհայտնվի աղետալի վիճակում»: Մելիք-Միրզոեւի գնահատմամբ, Ադրբեջանը արդեն սկսել է Ռուսաստանին թուլացնել՝ «մրցակցելով «Գազպրոմի» հետ»:

Նա գտնում է, որ «ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի, այնպես էլ մոտ ապագայի անհաջողությունների համար հայերը պետք է մեղադրեն իրենց, թե ինչո՞ւ մերժեցին մադրիդյան սկզբունքները եւ առաջարկվող ինքնավարությունը (Լեռնային Ղարաբաղի)»:

Նույն օրն ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ հատվածներ են հրապարակել Wall Street Jornel-ում տպագրված՝ Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի «Կայուն խաղաղության հաստատումը» հոդվածից: Այն Մելիք-Միրզոեւի «վերլուծությունից» տարբերվում է նրանով, որ նույն գաղափարները նրբաքողարկված են դիվանագիտական ձեւակերպումներով:

Արտառոցն այն է, որ այդ ոգով Մամեդյարովը հույս է տածել, որ «Դուբլինում հնարավոր կլինի հասնել առաջընթացի (ղարաբաղյան կարգավորման հարցով)»: Որքա՞ն է մեր ժամանակներին հարիր ադրբեջանական շիզոֆրենիան՝ թող գնահատական տան ԵԱՀԿ նախարարների խորհրդում: Մեզ համար ավելորդ չէր լինի մտածել՝ իսկ գուցե արդեն ժամանա՞կն է քայլեր ձեռնարկելու, որ Ադրբեջանը, իր ցանկությանը համապատասխան, հայտնվի «մուրճի եւ սալի արանքում»: Մելիք-Միրզոեւը հիշեցնում է Առաջին համաշխարհային պատերազմը:

Այն ժամանակ ոչ Հայաստանն էր անկախ, ոչ մանավանդ՝ Ադրբեջանը: Կար Թուրքիա, որ հավակնում էր Իրանը տեսնել թուլացած, Ռուսաստանը՝ մասնատված: Եվ փլուզվեց Օսմանյան կայսրությունը: Վատ օրինակ չէ: Չէ՞ որ նույն այդ դարաշրջանի ծնունդ է կովկասյան թաթարների ռազմերգը՝ «բիր-իքի՝ Կավկազ բիզիմքի» (մեկ-երկու՝ Կովկասը մերն է լինելու), որ այսօր «երգում է» Այդին Մելիք-Միրզոեւը՝ Իլհամ Ալիեւի «դիրիժորությամբ»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ադամ Շիֆ. «Ադրբեջանը բարձր գին պետք է վճարի իր արարքների համար»

*1-ին էջից*

Ադրբեջանի ԱԳ նախարարությունը, որպես Շիֆի նամակի արձագանք, հանդես է եկել հայտարարությամբ, թե Շիֆի հայտարարությունները հակադրվում են ԱՄՆ ազգային շահերին, կարծես Ադրբեջանին հակադրվելիս ամերիկյան շահն առ ոչինչ է դառնում: ԱԳՆ հատուկ ներկայացուցիչ Էլմար Աբդուլաեւը հայտարարել է. «Ինչ կարելի է սպասել ամերիկյան կոնգրեսականից, որի քաղաքական կարիերան կախված է հայկական սփյուռքից»: Ամերիկյան շահերի «պաշտպան» Աբդուլաեւը նաեւ կարծիք է հայտնել, թե Շիֆի նման հայտարարությունները «ապացուցում են, որ նա լիովին գտնվում է հայկական սփյուռքի ազդեցության տակ»:

Որ որեւէ կոնգրեսական Միացյալ Նահանգներում կարող է գտնվել հայկական սփյուռքի ազդեցության տակ, որեւէ բացասական մոտեցում չի կարող պարունակել այն պարզ պատճառով, որ հայկական սփյուռքն այդ երկրի քաղաքացիներից է կազմված, որոնք ընտրելու, հետեւաբար նաեւ պահանջելու, իրենց շահերը ներկայացնելու պահանջ դնելու իրավունք ունեն:

Ամեն դեպքում, որեւէ մեկի ազդեցության տակ լինելը, երբ այդ մեկը քո ընտրողն է կամ այն հարկատուն, որի վճարումների շնորհիվ դու աշխատավարձ ես ստանում, ժողովրդավարություն է, մինչդեռ ադրբեջանական ազդեցության առումով ավելի շուտ արդեն ողջ մոլորակով հայտնի ու վարկաբեկված «խավիարային» դիրքորոշման հետ գործ ունենք, այլ ոչ սեփական դիրքորոշման արտահայտման:

Եվ եթե Եվրոպայում, եվրոպական մի շարք կառույցներում ադրբեջանական «խավիարը» ճանապարհ է հարթում, հենց Ադրբեջանում էլ «խավիարի» հոտ է գալիս շատ հայտարարություններից, որոնցից վերջինը արել է այդ երկրում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Ռոլանդ Կոբիան, որին, ի դեպ, «տարօրինակ» հայտարարությունները հատուկ են՝ հետագայում դրանք հերքելու երբեմն դրսեւորվող մոտեցմամբ:

Այս անգամ էլ Կոբիան հայտարարել է, թե Ադրբեջանում սպասվող նախագահական ընտրություններում Իլհամ Ալիեւը ավելի մեծ շանս ունի: «Ընտրություններում կհաղթի ամենաուժեղ թեկնածուն», ասել է Կոբիան, ու, ըստ ադրբեջանական կայքէջերի, ավելացրել, թե Ալիեւի շանսերը ավելին են, քանի որ «նա պոպուլյար է ժողովրդի մեջ»:

Հետաքրքրական է, թե հատկապես խավիարի ո՞ր գույնն է նախընտրելի, երբ Ալիեւը կարող է ներկայացվել որպես ժողովրդի «ընտրյալ»:

# Պուտինը երրորդն է ամենաազդեցիկ մարդկանց ցանկում

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը 3-րդ տեղն է զբաղեցնում աշխարհի ամենաազդեցիկ մարդկանց այս տարվա ցանկում, որը ավանդույթի համաձայն հրապարակել է «Ֆորբս» հանդեսը: Անցյալ տարի ՌԴ նախագահը զբաղեցնում էր 2-րդ տեղը, 2010-ին՝ 4-րդ, 2009-ին՝ 3-րդ:

2012 թվականի ցանկում 1-ին տեղը զբաղեցնում է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, որը նոյեմբերին վերընտրվեց նախագահի պաշտոնում: 2-րդ տեղում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն է: Օբաման ցանկը գլխավորում է երկրորդ տարին անընդմեջ, իսկ Մերկելն անցյալ տարի 4-րդն էր:

«Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը, որն անցյալ տարի 5-րդ տեղում էր, այս տարի զբաղեցնում է 4-րդ տեղը: 5-րդ տեղում Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդն է, որն անցյալ տարվա համեմատությամբ 2 կետով բարելավել է իր դիրքերը:

Ամենաազդեցիկ անձանց առաջին տասնյակում տեղեր են զբաղեցնում նաեւ ԱՄՆ Կենտրոնական բանկի ղեկավար Բեն Բեռնանկեն (6) եւ Եվրոպայի ԿԲ նախագահ Մարիո Դրագին (8): 7-րդ տեղում է Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլլահ իբն Աբդել Ազիզը, 9-րդ տեղում՝ ՉԺՀ Կոմկուսի գլխավոր քարտուղար եւ երկրի ապագա նախագահ Սի Ցզինպինը: Տասնյակը եզրափակում է Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը:

ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը 61-րդ տեղում է (2011-ին՝ 59-րդ տեղ): Նրան հաջորդում են Չինաստանի նախկին նախագահ Ցզյան Ցզեմինը եւ Մեքսիկայում առավել շատ որոնվող հանցագործ թմրաբարոն Խոակին «Էլ Չապո» Գուսմանը:

Ռուսաստանցի գործարար Ալիշեր Ուսմանովը զբաղեցնում է 67-րդ տեղը, «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերը՝ 70-րդ տեղը: Վերջին 71-րդ տեղում գործարար Ռիդ Հոֆմանն է:

Ցանկը կազմելիս հաշվի են առնվել մասնակիցների ազդեցության շրջանակները, վերահսկվող ֆինանսական միջոցների չափը, ինչպես նաեւ կյանքի տարբեր ոլորտների վրա ազդելու կարողությունը:

ԵԳԻՊՏՈՍ

# Մուրսիի կողմնակիցների եւ հակառակորդների կատաղի բախումներ

*Տանկեր նախագահական պալատի մոտ*



**Դեկտեմբերի լույս 6-ի գիշերը Եգիպտոսի մայրաքաղաքում շարունակվում էին նախագահ Մուհամմեդ Մուրսիի կողմնակիցների եւ հակառակորդների բախումները, որոնք սկսվել էին դեռ նախօրեին: Վերջին մեկ օրվա ընթացքում բախումների հետեւանքով Կահիրեում առնվազն 5 մարդ է սպանվել, վիրավորների թիվն անցնում է 450-ից: Այդ մասին Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել են Եգիպտոսի առողջապահության նախարարությունում:**

**Արաբական հեռուստաալիքները հաղորդում են, որ բախումների ժամանակ մի շարք դեպքերում օգտագործվել են սառը զենք եւ հրազեն:**

**Ընդդիմադիրները հայտարարում են, որ բախումները հրահրել են իսլամիստները, որոնք քարեր եւ հրկիզախառնուրդով լի շշեր էին նետել նախագահական պալատի առջեւ նստացույց անող մարդկանց վրա: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության կոչով իրականացված հարձակման ժամանակ հրկիզվել էին ընդդիմադիրների վրանները:**

**Ներկայումս Կահիրեում նախագահական պալատի շուրջը տեղաբաշխված են 3 տանկ եւ մի քանի զրահամեքենա, նշում է Ռոյթերը:**

**Եգիպտոսի ներքգործնախարարությունը հաղորդում է, որ դեկտեմբերի 5-ին եւ լույս 6-ի գիշերը կալանավորվել են անկարգությունների 3 տասնյակ հրահրիչներ: Նաեւ նշվում է, որ բախումներ տեղի են ունենում ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ Ալեքսանդրիայում, Իսմաիլիայում, Սուեզում եւ այլ քաղաքներում: Ալեքսանդրիայում եւ Իսմաիլիայում ընդդիմադիրները հրկիզել են «Մուսուլման եղբայրների» քաղաքական թեւի՝ «Ազատության եւ արդարության» կուսակցության գրասենյակները:**

**Ներկայիս ճգնաժամը Մուհամմեդ Մուրսիի համար ամենալուրջ փորձությունն է ամռանը նախագահ ընտրվելուց ի վեր: Պետության ղեկավարին օրենքից բարձր դասող հրամանագրերը եւ շարիաթի նորմերին համապատասխան գրված նոր սահմանադրության նախագիծը զայրացրել եւ միավորել են ընդդիմադիրներին, սակայն «Մուսուլման եղբայրները» սպառնում են, որ կարող են ի պաշտպանություն նախագահի փողոց դուրս բերել ավելի մեծ թվով ցուցարարների:**

# Ֆ. Համմոնդ. «Իրանի դեմ պատերազմը կփլուզի Մեծ Բրիտանիայի տնտեսությունը»

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար **Ֆիլիպ Համմոնդը** հայտարարել է, որ Իրանի վրա Իսրայելի կամ ԱՄՆ-ի հարձակումը կհանգեցնի Պարսից ծոցից նավթի առաքումների ընդհատմանը, ինչը կթանկացնի էներգակիրները եւ ուղղակիորեն կազդի Մեծ Բրիտանիայի տնտեսության վրա: «Թելեգրաֆ» թերթը նշում է, որ նախարարն այդ մասին հայտարարել է խորհրդարանի ռազմավարության եւ ազգային անվտանգության կոմիտեում ունեցած ելույթում:



Պատասխանելով այն հարցին, թե Իրանի միջուկային օբյեկտներին հարվածելը ինչպիսի հետեւանքներ կունենա, Համմոնդն ասել է, որ Մեծ Բրիտանիան ճիշտ է համարում դիվանագիտական մեթոդների շարունակումը, որպեսզի Իրանը հրաժարվի սեփական միջուկային ծրագրի զարգացումից: Միեւնույն ժամանակ նա չի բացառել այլ հնարավորություններ, ընդգծելով, որ պատժամիջոցները ազդում են Իրանի տնտեսության վրա, եւ դա անպայման կանդրադառնա այդ երկրի քաղաքական իրադրության վրա: Համմոնդն ավելացրել է, որ հակաիրանական պատերազմը կապակայունացնի տարածաշրջանը եւ կվտանգի Պարսից ծոցից նավթի մատակարարումները. Հորմուզի նեղուցով անցկացվում է աշխարհում արտահանվող ամբողջ նավթի մոտ 40 տոկոսը: Փորձագետները կարծում են, որ նեղուցի փակման դեպքում նավթի մեկ բարելը կթանկանա 40-50 դոլարով: Այժմ մեկ բարելի գինը 90 դոլար է:

*Վարդգէս Պետրոսեան իր գրական տաղանդին եւ վարչական կարողութեան առ ի գնահատանք, սակաւին շատ երիտասարդ տարիքին, արդէն տիրացած էր Խորհրդային Հայաստանի գրողներու միութեան նախագահի պաշտօնին։ Յիշարժան պարագայ էր, որ Աւետիք Իսահակեանէն յետոյ, նախագահի յորջորջումը ոեւէ մէկուն չէր տրուած, անոնք կը կոչուէին Գրողներու միութեան քարտուղար՝ ունենալով Ա. Բ. եւ Գ. օգնական քարտուղարներ։*

*Մեծ եւ պատասխանատու գործ էր ղեկավարել շուրջ 350 անդամ ունեցող այդ միութիւնը՝ հասնելու համար գրողներու գործերուն հրատարակութեան, պատուագիրներու վճարման եւ անոնց բազմատեսակ պահանջներուն՝ ինչպէս բնակարանային հարց, ինքնաշարժ, տարեկան վճարուած արձակուրդ՝ Ծաղկաձորի մէջ, կամ այլուր, եւայլն։*

*Անհուն գոհունակութեամբ կը յիշեմ սերտ գործակցութիւնը, որ կար սփիւռքի եւ հայրենիքի գրողներուն միջեւ։ Այս իրականութեան մէկ գեղեցիկ օրինակը եղաւ ԹՄ-Միութեան «Շիրակ» ամսագրի 25-ամեակին տօնակատարութիւնը Պէյրութի մէջ, որուն նախագահելու հրաւիրուած էր Վարդգէս Պետրոսեան։ Փոխադարձաբար, սփիւռքահայ գրողներ կը հրաւիրուէին Հայաստանի մէջ տեղի ունեցող տօնակատարութիւններուն, ինչպէս Վ. Պետրոսեանի յիսնամեակի հանդիսութիւնը, որուն բացումը Սերօ Խանզադեան կատարելէ յետոյ, խօսք տրուեցաւ ինծի, յանուն «Շիրակ»ի խմբագրութեան։*

*Ստորեւ՝ իմ խօսքը.-*

# Վաղամեռիկ Վարդգէս Պետրոսեանի 80-ամեակին առթիւ



Վարդգէս Պետրոսեանը ժամանակ մը առաջ անուն մըն էր ինծի համար, ինչպէս սիրուած անուններ շարք մը հայրենի գրողներու։ Սակայն կը զգայինք, թէ տարբեր էր ան։ Նախ որովհետեւ, մեզմէ էր ան՝ մեր սերնդակիցը, որ հին սերունդի լաւագոյն աւանդներուն ժառանգորդն ու շարունակողը ըլլալով հանդերձ՝ ունէր նո՛ր ըսելիք, ի՛ր եւ մե՛րը։ Եւ իր ու սերնդակիցներուն խօսքը ըսելու համար տրուեցաւ այդ առիթը։ Աւելի ճիշդ է ըսել, որ ան նուաճեց զայն, քանի որ կեանքը կը սորվեցնէ մեզի, թէ ոչինչ կը տրուի ինքնաբերաբար, եթէ նոյնիսկ ամենաարդար բանն է ուզուածը։

Ազգային մեր կեանքին մէջ, սփիւռքն ու հայրենիքը միասնաբար առած, հազուադէպ է որ սերնդափոխութեան գործընթացը բնականոն կերպով կատարուած ըլլայ։ Երեւոյթ մը, որ մեծապէս վնասած է մեր հասարակական կեանքի լաւագոյնս զարգացման։ Ի՜նչ ուրախ առիթ է սակայն հաստատել, թէ այդ հազուադէպ պարագաներէն մէկը եղաւ Հայաստանի գրողներու հսկայ ու պատկառելի կազմակերպութեան մէջ սերնդափոխութեան գործընթացը՝ երէցներուն տալով յարգանքի արժանի իրենց տեղը, իսկ նորերուն՝ գործելու, իրենք զիրենք դրսեւորելու առիթը, մեր հնամեայ եւ ադամանդեայ գրականութեան գանձը աւելի եւս ճոխացնելու, պրիսմակին վրայ նոր երես աւելցնելու, գեղեցկացնելու իրենց հերթը։

Վերջերս մեզի պատեհութիւն տրուեցաւ աւելի մօտէն ճանչնալու յոբելեարը, եւ Վարդգէս Պետրոսեանը անուն մը ըլլալէ անդին անցնելով դարձաւ մտերիմ ընկեր մը, հարազատ եղբայր մը, մարդ մը գլխագիր։ Այդ պատեհութիւնը մեզի տուաւ Թէքէեան մշակութային միութեան գրական ու գեղարուեստական ամսագիրը, որուն հիմնադրութեան 25-ամեակը պիտի տօնուէր ապրիլ ամսուն ընթացքին՝ հանդիսութիւններու շարքով մը։ Վիթխարի եւ յուզիչ նախաձեռնութիւն մըն էր կատարուածը, քանի որ ամբողջ սփիւռքի վրայ առաջին անգամն էր որ գրական օրգան մը կը յանդգնէր այսքան մեծածախս եւ համահայկական կերպով տօնախմբել իր 25-ամեակը։

«Շիրակ»-ի խմբագրական մարմինը ի շարս սփիւռքահայ բազմաթիւ գրական դէմքերու եւ աշխատակիցներու ուղղուած հրաւէրին՝ հանդիսութեանց նախագահելու հրաւիրեց Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Վարդգէս Պետրոսեանը, որուն ներկայութիւնը կը հաստատէր նաեւ այն մեծ իրականութիւնը, թէ մէ՛կ է հայ ժողովուրդը, մէ՛կ գրականութեամբ։

Որքան ուրախ եւ հպարտ եղանք, որ ան ընդառաջեց մեր հրաւէրին, եկաւ ռմբակոծութիւններու տակ աւերուած ու սգահար Լիբանան, եկաւ որպէս Աշտարակի ծիծեռնակը եւ իր հետ բերաւ գարուն եւ բերկրանք եւ խաղաղութիւն։ Ինչ փոյթ թէ կտոր մը միայն եւ կարճատեւ եղաւ այդ խաղաղութիւնը եւ մենք կարելիութիւնն իսկ չունեցանք ողջերթ մաղթելու իրեն արժանավայել կերպով։

Իր 21 օրեայ կեցութեան ընթացքին տաղանդաւոր գրողէն ու թատերագիրէն անկախ մենք իր մէջ գտանք ջերմ զրուցակիցը, խիզախ բեմբասացը, որ գիտէ սեւին ըսել սեւ, եւ ճերմակին ալ ճերմակ, բայց նաեւ գիտէ չըսել ոչ մէկ բան, որ կրնայ ըլլալ անպատշաճ ու վնասակար։ Եւ մենք հպարտ եղանք իրմով, իր անձին մէջ գտնելով նաեւ ճկուն եւ կարող վարչագէտը։ Եւ այնուհետեւ մեզի համար պարզ դարձաւ, թէ ինչպէ՛ս եւ ինչո՛ւ դեռ երիտասարդ Վարդգէսը նուաճեց նախագահութեան աթոռը, որ Վարպետին մահէն յետոյ թափուր կը մնար։

«Շիրակ»-ի յոբելենական հանդիսութիւնները յստակապէս իր ներկայութեան շնորհիւ անցան արժանավայել շքեղութեամբ, եւ երբեմն իր ներկայութիւնը այնքան լեցուց մեր սրահներն ու սրտերը, որ կարծես թէ «Շիրակ»-ի 25-ամեակէն աւելի Վ. Պետրոսեանի 50-ամեակն էր որ կը տօնէինք վաղահասօրէն։

Մեծ եղաւ իր այցելութեան բարիքը շիրակցիներուն համար, Թէքէեանի լայն շրջանակին համար, մանաւանդ այդպիսի օրերուն, երբ հանդիսութեանց ընթացքին արտասանուող խօսքին ու երգին յաճախ կընկերակցէր ռումբերու խժալուր յանկերգը։ Աւելի մեծ յանձնառութիւններու տակ մնացինք մենք բոլորս՝ պահելու լիբանանահայ գաղութը ազգային-մշակութային իր ամբողջ կառուցուածքով, աչքը հայրենիքին ուղղուած իր ժողովուրդով, որպէսզի Լիբանանէն արտածուած մտաւորականներով աւելի եւս տկայ հայ սփիւռքը։

Ես վստահ եմ, որ նոյնքան ծանր յանձնառութիւններով վերադարձաւ նաեւ Վարդգէս Պետրոսեանը, իր պաշտօններուն ու պարտականութիւններուն վրայ աւելցուցած նոր մը, գուցէ փոքր բայց սիրելի պաշտօն մը՝ «Շիրակ»ի խմբագրութեան պատուակալ անդամի հանգամանքը։

Իր յիսնամեայ յոբելեանին առթիւ «Շիրակ» ամսագիրին եւ Թէքէեան մշակութային միութեան անունով կողջունեմ զինք, մաղթելով քաջառողջութիւն եւ ստեղծագործական յարաճուն վերելք, եւ նաեւ երկրորդ յիսնամեակի մը տօնակատարութիւնը՝ ստեղծագործ աշխատանքով եւ արդար ձգտումներով աւելի հզօրացած եւ գեղեցկացած մայր հայրենիքի չքնաղ մայրաքաղաք Երեւանի մէջ։

**ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ**
**«Զարթօնք», 7 Հոկտեմբեր 1982**

***Խմբ. կողմից.-*** *Այժմ արդեն կարելի է ասել, որ Թեքեյան մշակութային միության շրջանակի, հետեւաբար Ռամկավար ազատական կուսակցության ղեկավարների հետ շփումները եւ մտերմությունը նույնպես իրենց դերն ունեցան հետագայում, 1992 թ.-ին, արդեն անկախ Հայաստանի Հանրապետության պայմաններում, որ Վարդգես Պետրոսյանը անդամագրվեց Ռամկավար ազատական կուսակցությանը եւ հանդիսացավ ՀՀ Գերագույն խորհրդում (Ազգային ժողով) այդ կուսակցության խմբակցության անդամ, միեւնույն ժամանակ կարեւոր հոդվածներ տպագրեց* ***«Ազգ»*** *օրաթերթում:*

***ՆՈՐ ԳԻՐՔ***

# «Միջին տարիքի ճգնաժամ»

**«Միջին տարիքի ճգնաժամ» («Кризис среднего возраста»)՝ այսպես է կոչվում մի շարք գրքերի հեղինակ Նինա Մաքսիի նոր գիրքը, որը 2012 թ. լույս է տեսել Երեւանի «Էդիթ պրինտ» հրատարակչությունում (ռուսերեն):**

**Գիրքը շատ հետաքրքրական է, գրված է գեղեցիկ գրական լեզվով եւ ընթերցվում է մեկ շնչով:**

**Դա շատ պիտանի գիրք է ժամանակակից ընթերցողի համար, անհրաժեշտ է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար:**

**Նինա Մաքսիի գիրքը պատմում է սիրո եւ կրքի, բարեկամության եւ դավաճանության, մարդուն ամբողջապես կլանող ամենակուլ ընչաքաղցության (ագահության) մասին, մարդավաճառության եւ 21-րդ դարի սեռական ստրկուհիների, մարմնավաճառության եւ առհասարակ կյանքի մասին: Նինա Մաքսին ճիշտ ժամանակին բարձրացնում է այդ խնդրահարույց հարցերը իր նոր, պատկերազարդված գրքում:**

**«Միջին տարիքի ճգնաժամը» գիրքը ընթերցողին մեծ բավականություն է պատճառում, ուստի ամեն ոք պետք է կարդա այն: Գիրքն օգտակար է նաեւ մեր երիտասարդների համար, որոնցից շատերը ուզում են ամեն գնով լքել հայրենի օջախը եւ հայտնվել Արեւմուտքի երկրներում, որոնելով դրախտային կյանք եւ մեծ փողեր: Բայց թե իրականում ինչ է ստացվում, դուք կիմանաք՝ ընթերցելով Նինա Մաքսիի նոր եւ օգտակար գիրքը:**

**Այդպիսի գիրքը հարկավոր է հրատարակել միլիոնանոց տպաքանակով, որպեսզի արտերկիր մեկնող ամեն ոք մի լավ մտածի, թե արժե՞ արդյոք լքել Հայրենիքը եւ մեկընդմիշտ մեկնել օտար երկիր, որտեղ իրեն ոչ ոք չի սպասում, թե՞ այնուամենայնիվ ավելի լավ է մնալ տանը, հարազատ պատերի մեջ:**

**Հիշեցման կարգով նշենք, որ Նինա Մաքսին մեր հայ ընթերցողին արդեն ծանոթ է «Բաքու-90, կամ ինչպես կերան Ժաննա Բաբայանին» եւ «Ահաբեկչություն: Ո՞վ է հաջորդը» պատմավավերագրական վիպակներով (ռուսերեն):**

**«Միջին տարիքի ճգնաժամը» գիրքը պատկերազարդված է հետաքրքրական նկարներով: Կազմի վրա Նինա Մաքսիի նկարներից մեկն է, որն արված է կտավի վրա յուղաներկի մուգ կարմիր տոներով եւ կոչվում է «Սինգապուրյան կոկտեյլ»: Կտավը դրված է աճուրդի: Ցանկացողները կարող են այդ աճուրդին մասնակցել համացանցի միջոցով՝ facebook.com:**

**Ինձ հաջողվեց հանդիպում ունենալ Նինա Մաքսիի հետ եւ նրան մի քանի հարց տալ մարմնավաճառության, մարդավաճառության եւ շատ այլ բաների մասին: Գրողի հետ շատ հետաքրքրական հարցազրույցը կարդացեք մեր թերթի առաջիկա համարներից մեկում:**

**Պ. ՔԵՇԻՇՅԱՆ**

# Անվանի նկարիչների նվիրաբերությունը կենդանաբանական այգուն

Երեւանի կենդանաբանական այգին, Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) նախաձեռնել են նվիրահավաք: Այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը եւ հայ նկարիչներ Արա Ասլանյանը, Սարո Գալենցը, Ռոբերտ Էլիբեկյանը, Գագիկ Ղազանչյանը, Մարի Ադամյանը, Արշակ Սարգսյանը, Մարինա Դիլանյանը, Նուռը (Արման Դավթյան), Սարգիս Անտոնյանը, Գաբոն (Գաբրիել Մանուկյան) նվիրահավաքը ձեռնարկել են հօգուտ այգու: Նկարիչներն իրենց ստեղծագործությունները նվիրաբերել են կենդանաբանական այգուն աջակցելու եւ առկա խնդիրները մասամբ լուծելու նպատակով:

Երեւանի կենդանաբանական այգու հրատապ խնդիրները շատ են, դրանցից մեկը՝ անասնաբուժական ծառայությունների բարելավումն է, կենդանիների համար մեկուսարանի ստեղծումը, որտեղ հիվանդ կենդանիները կարող են առանձնացվել եւ բուժվել:

Հենց այս խնդրի լուծմանն է նվիրված նկարիչների կողմից արված նվիրաբերությունը: Դեկտեմբերի 14-ին, «Մարիոթ» հյուրանոցում Երեւանի կենդանաբանական այգու եւ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կողմից կկազմակերպվի բարեգործական երեկո: Երեկոյի կիզակետը կլինի վերոնշյալ հեղինակների բնօրինակ նկարների աճուրդ-վաճառքը: Նշենք, որ նկարիչներն իրենց արվեստի գործերը ստեղծել են հենց այս նպատակով՝ օգնելու Երեւանի կենդանաբանական այգուն, չակնկալելով որեւէ հոնորար: Նվիրաբերված նկարներն ընդգրկված են նաեւ Երեւանի կենդանաբանական այգու 2013թ.-ի օրացույցում, որն ամանորյա հիանալի նվեր կարող է լինել յուրաքանչյուրի համար:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝**
**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -10/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի դահլիճում իրականացվող շինարարական աշխատանքների պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի դահլիճում իրականացվող շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW.gnumner.am** էլեկտրոնային հասցեով, **http://www.azdarar.am** հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 12.12.2012 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝**
**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԾՁԲ -05/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ «Շենքերի» և կառույցների ներքին հարդարման և նորոգման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ Շենքերի և կառույցների ներքին հարդարման և նորոգման ծառայությունների մատուցումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW.gnumner.am** էլեկտրոնային հասցեով, **http://www.azdarar.am** հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 13.12.2012 թվականի ժամը 15:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

ԱԶԳ

# Մարզական

## Ռազմիկ Հունանյանը նվաճեց Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսը



Իսրայելում ընթացող ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում մինչեւ 77 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացված չէր: Սակայն հայ ծանրորդը կանգնեց պատվո պատվանդանին: Խոսքը Ռուսաստանը ներկայացրած Ռազմիկ Հունանյանի մասին է, որը մինչեւ 20 տարեկանների մրցավեճում երկամարտի 335 կգ (150+185) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն:

18-ամյա հայ ծանրորդը վստահ ելույթ ունեցավ պոկում վարժությունում՝ հաջողաբար բարձրացնելով 140, 146 եւ 150 կգ: Սակայն այդ արդյունքով նա գրավեց միայն 5-րդ տեղը: Լավագույն արդյունքը ցույց տվեց ռուսաստանցի Մուհամադ Խիբալովը (152 կգ), որն արժանացավ փոքր ոսկե մեդալի: Նա անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ գերազանցեց նույնպիսի ցուցանիշի հասած բելառուս Պյոտր Ասայոնակին, որը բավարարվեց արծաթե մեդալով: Բրոնզե մեդալը բաժին հասավ բելառուս մեկ այլ մարզիկի՝ Իվան Կլիմին (151 կգ):

Ռազմիկ Հունանյանն ավելի բարձր արդյունքներ ցույց տվեց հրում վարժությունում, ինչն էլ նպաստեց մրցանակակիր դառնալուն: Նա վարժությունը սկսեց 178 կգ-ից: 2-րդ մոտեցմամբ Ռազմիկը չկարողացավ բարձրացնել 183 կգ-ը, իսկ ահա 185 կգ-անոց ծանրաձողը 3-րդ փորձից «սանձեց»: Այդ արդյունքով նա հրում վարժությունում արժանացավ փոքր բրոնզե մեդալի, իսկ երկամարտում գրավեց 2-րդ տեղը: Ճիշտ է, երկամարտում 335 կգ արդյունք էր ցույց տվել նաեւ իտալացի Անդրես Մաստան, սակայն ավելի ծանր անձնական քաշի պատճառով նա բավարարվեց բրոնզե մեդալով: Իսկ չեմպիոնի տիտղոսը երկամարտի 336 կգ (146+190) արդյունքով նվաճեց հույն Անտոնիս Մարտասիդիսը, որը պոկում վարժությունում ցույց էր տվել ընդամենը 6-րդ ցուցանիշը:

Մինչեւ 77 կգ քաշային կարգի մինչեւ 23 տարեկանների մրցավեճն ավարտվեց ռումինացի Պաուլ Ստոյկիցայի հաղթանակով: Նա երկամարտում ցույց տվեց 328 կգ (142+186) արդյունք: 2-րդ տեղը գրավեց բուլղարացի Ալեքսանդր Դիմիտրովը՝ 327 կգ (147+180): Բրոնզե մեդալակիր դարձավ լեհ Լուկաշ Կրավչիկը՝ 316 կգ (135+181):

Մինչեւ 85 կգ քաշային 20 տարեկան ծանրորդների մրցավեճին մասնակցած Հայաստանի ներկայացուցիչ Սեդրակ Խաչատրյանը թույլ ելույթ ունեցավ: Նա երկամարտի 325 կգ (150+175) արդյունքով գրավեց 8-րդ տեղը: Չեմպիոն հռչակվեց բելառուս Ալեքսեյ Խունաեւը, որը երկամարտում ցույց տվեց 360 կգ (163+197) արդյունք: 2-րդ տեղը 350 կգ-ով (158+192) զբաղեցրեց նրա հայրենակից Դմիտրի Ժուկը: Բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Վիկտոր Գյոտցը՝ 346 կգ (154+192):

**ԲՌՆՑՔԱՄԱՐՏ**

## Եզրափակիչ մտավ միայն Նիկոլ Հարությունովը




Երեւանում ընթացող բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում երեկ կայացան կիսաեզրափակիչ մենամարտերը: Պայքարը շարունակող հայաստանցի 2 բռնցքամարտիկներից միայն Նիկոլ Հարությունովին հաջողվեց եզրափակիչի ուղեգիր նվաճել: Մինչեւ 81 կգ քաշային կարգում հայ բռնցքամարտիկը վստահ անցկացրեց մենամարտը ռուսաստանցի Իդրիս Շախմանովի հետ՝ հաղթելով 19-9 հաշվով: Այսօր կայանալիք վճռորոշ մենամարտում Հարությունովն աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկի շոտլանդացի Սկոտ Էնտոնի Ֆորեստի հետ, որը 13-7 հաշվով պարտության էր մատնել վրացի Ալեքսանդր Դոկվաձեին:

Գերծանրքաշային Նարեկ Մելքոնյանը պարտվեց անգլիացի Հյուի Լուիս Ֆերիին (5-13) ու բավարարվեց բրոնզե մեդալով: Եզրափակիչում Ֆերիի մրցակիցը կլինի հնդիկ բռնցքամարտիկ Նարենդերը:

## Կոբի Բրայանտը հատեց 30 հազար միավորի սահմանագիծը

**ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության առաջնության մասնակից «Լոս Անջելես Լեյքերսի» առաջատար Կոբի Բրայանտը «Նյու Օռլեանի» հետ խաղում հատեց 30 հազար միավորի սահմանագիծը՝ դառնալով նման ցուցանիշի հասած ամենաերիտասարդ բասկետբոլիստը: 34-ամյա Կոբի Բրայանտին 30 հազարի սահմանագիծը հատելու համար անհրաժեշտ էր 13 միավոր վաստակել: Նա գերակատարեց առաջադրանքը՝ իր օգտին գրանցելով 29 միավոր: Այսպիսով, մարզական կարիերայում անվանի բասկետբոլիստն արդեն վաստակել է 30016 միավոր: Այս ցուցանիշը լիգայում 5-րդն է:**

**Յուրօրինակ ռեկորդակիրը Քարիմ Աբդուլ Ջաբարն է, որը մարզական կարիերայում բասկետբոլի ազգային ընկերակցության հանդիպումներում 38387 միավոր է վաստակել: Նրան հաջորդում են Կառլ Մելոունը (36928), Մայքլ Ջորդանը (32292) եւ Ուիլտ Չեմբեռլենը (31419):**

**Կոբի Բրայանտից հետո գործող բասկետբոլիստներից 2-րդ ցուցանիշն ունի Քեւին Գարնետը (24535 միավոր):**

## «Յուվենտուսը» դուրս թողեց «Չելսիին» չեմպիոնների լիգայից

**8 հանդիպումներով ավարտվեց չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարը, որի գլխավոր անակնկալը չեմպիոնների գավաթակիր Լոնդոնի «Չելսիի» ժամկետից շուտ լիազորությունների վայր դնելն էր: Չեմպիոնների լիգայի պատմության մեջ առաջին անգամ գործող գավաթակրին չհաջողվեց հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը:**

**«Չելսիի» ճակատագիրը Դոնեցկի «Շախտյորի» ձեռքում էր: Միայն «Շախտյորի» հաղթանակի դեպքում «Չելսին» կշարունակեր պայքարը չեմպիոնների լիգայում: «Շախտյորին» «Յուվենտուսի» հետ մրցավեճում ձեռնտու էր նույնիսկ ոչ-ոքին խմբում 1-ին տեղը զբաղեցնելու համար: Դաշտի տերերն ունեցան դարպասը գրավելու համար առիթներ, սակայն չօգտագործեցին: Իսկ ահա «Յուվենտուսը» գրոհներից մեկի ժամանակ ստիպեց «Շախտյորի» պաշտպան Կուչերին գնդակն ուղարկելու սեփական դարպասը: Այդ գոլն էլ վճռեց հանդիպման ելքը, որը «Յուվենտուսին» խմբի հաղթող դարձրեց:**

**Խաղի մասին Հենրիխ Մխիթարյանը հետեւյալն է ասել ակումբի պաշտոնական կայքի թղթակցին. «Կարելի է ասել, որ բացի այս խաղից, չեմպիոնների լիգայի խաղարկության մնացած հանդիպումներում մենք լավ հանդես եկանք: Այսօր կարող էինք խաղն ավարտել ոչ-ոքի, որն ավելի օրինաչափ արդյունք կլիներ: Սակայն գոլ խփեցինք սեփական դարպասն ու պարտվեցինք: Թիմը խաղում էր, ցանկանում էր արդյունքի հասնել, սակայն գրոհների եզրափակիչ փուլում ինչ-որ բան չէր ստացվում: Հավանաբար հոգեբանորեն հոգնել էինք: Բայց ամենակարեւորն այն է, որ շարունակելու ենք պայքարը: Ամեն ինչ կանենք, որպեսզի հաղթահարենք նաեւ 1/8 եզրափակիչի արգելքը: Իսկ առայժմ հարկավոր է մի լավ հանգստանալ:**



**Կմեկնենք Երեւան, որտեղ կանցկացնեմ հանգիստս»:**

**Թիմերի մարզիչները խաղից հետո հետեւյալ կարծիքն են արտահայտել:**

**Միրչա Լուչեսկու («Շախտյոր»)- Ով շատ էր ցանկանում, նա էլ հաղթեց: Ամեն դեպքում մեզ այս խաղում ոչ-ոքին էլ բավարարում էր: Բայց ամեն դեպքում հավասար խաղ էր: Իմ տղաներն էլ բավական լավ էին խաղում: Սակայն «Յուվենտուսի» գործողություններն ավելի ագրեսիվ եւ կազմակերպված էին: Ճիշտ է, որոշ դրվագներից դժգոհ եմ, բայց ընդհանուր առմամբ տղաները լավ խաղացին: Սա այս տարվա վերջին հանդիպումն էր: Գոհ ենք, որ մտանք չեմպիոնների լիգայի հաջորդ փուլ: Խմբերում առաջին տեղը զբաղեցրած թիմերից ոչ մեկից չենք վախենում: Բնականաբար, մեզ բոլորից շատ անհանգստացնում է «Բարսելոնի» հետ հանդիպելու հավանականությունը:**

**Անջելո Ալեսիո («Յուվենտուսի» գլխավոր մարզչի օգնական)-Մեր առջեւ դրված խնդիրը կատարեցինք. մտանք 1/8 եզրափակիչ նույնիսկ գլխավոր մարզիչ Անտոնիո Կոնտեի բացակայությամբ: Թիմը լավ խաղ ցուցադրեց ու հաղթեց: Լավատեսորեն ենք տրամադրված հետագա հանդիպումներում: «Շախտյորի» հետ խաղն էլ մեզ բավականություն պատճառեց:**

**Լոնդոնի «Չելսին» սեփական հարկի տակ 6-1 հաշվով ջախջախեց դանիական «Նորդշելանին», սակայն այդ հաղթանակը թիմին ոչինչ չտվեց: «Չելսին» դուրս մնաց չեմպիոնների լիգայից եւ պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայում:**

**F խմբում «Բավարիան» ու «Վալենսիան» վաղուց էին լուծել հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը: «Բավարիան» սեփական հարկի տակ 4-1 հաշվով հաղթելով ԲԱՏԷ-ին, 13 միավորով գրավեց 1-ին տեղը՝ խփած եւ բաց թողած գնդակների տարբերությամբ գերազանցելով նույնպիսի արդյունքի հասած «Վալենսիային»: Վերջինս էլ հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց ֆրանսիական «Լիլին»: ԲԱՏԷ-ն պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայում:**

**G խմբում «Բարսելոնը» սեփական հարկի տակ չկարողացավ հաղթել «Բենֆիկային»: Դարպասները մնացին անառիկ: Լիոնել Մեսին միայն ընդմիջումից հետո խաղադաշտ մտավ, իսկ խաղավարտից մի քանի րոպե առաջ վնասվածքի պատճառով լքեց մրցասպարեզը: Բժիշկների հավաստմամբ ոչ մի լուրջ բան չկա ու մի քանի օրից Մեսին կրկին կարող է խաղադաշտ դուրս գալ:**

**Շոտլանդական «Սելթիկը» 2-1 հաշվով հաղթելով Մոսկվայի «Սպարտակին», շրջանցեց «Բենֆիկային» եւ մտավ հաջորդ փուլ: Իսկ «Բենֆիկան» պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայում:**

**H խմբում «Մանչեսթր Յունայթեդն» արդեն ապահովել էր հաջորդ փուլի ուղեգիրը, իսկ 2-րդի համար պայքարում էին թուրքական «Գալաթասարայն» ու ռումինական ՉՖՌ-ն: Երկու թիմերն էլ հաղթեցին: «Գալաթասարայը» Պորտուգալիայում 2-1 հաշվով պարտության մատնեց «Բրագային», իսկ ՉՖՌ-ն Մանչեսթրում 1-0 հաշվով հաղթեց դաշտի տերերին: 2 թիմերն էլ վաստակեցին 10-ական միավոր: Բախտը ժպտաց թուրքական ակումբին, որը ռումինացիների հետ անձնական հանդիպումներում ավելի լավ արդյունքների էր հասել: Այնպես որ ՉՖՌ-ն ստիպված է պայքարը շարունակել Եվրոպայի լիգայում:**

**Եվ այսպես, հայտնի են չեմպիոնների գավաթի համար պայքարը շարունակող 16 ուժեղագույն ակումբները, որոնք դեկտեմբերի 20-ին կայանալիք վիճակահանությամբ զույգեր կկազմեն: Վիճակահանության ժամանակ խմբերում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած թիմերը կտեղաբաշխվեն առանձին զամբյուղներում: 1-ին տեղը զբաղեցրած թիմը զույգ կկազմի 2-րդ տեղը գրաված ակումբի հետ: Ընդ որում միեւնույն խմբում հանդես եկած թիմերը, ինչպես նաեւ նույն երկրի ակումբները չեն կարող հանդիպել 1/8 եզրափակիչում: Այնպես որ E խմբում 2-րդ տեղը գրաված «Շախտյորին» կարող է բաժին ընկնել հետեւյալ 7 թիմերից մեկը՝ ՊՍԺ-ն, «Շալկե-04-ը», «Մալագան», Դորտմունդի «Բորուսիան», «Բավարիան», «Բարսելոնը» կամ «Մանչեսթր Յունայթեդը»:**

## Գաբուզյանն ու Սիմոնյանը հաղթեցին

Պավլոդարում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Ավետիք Գրիգորյանը հաշտություն կնքեց Անվար Իսմագամբետովի հետ ու վաստակեց 5,5 միավոր: Մրցաշարի միանձնյա առաջատարի դերը ստանձնեց ռուսաստանցի Վլադիսլավ Արտեմեւը, որը հաղթելով Պյոտր Կոստենկոյին, վաստակեց 6 միավոր:

Տուրը հաղթական էր Հովհաննես Գաբուզյանի եւ Հրայր Սիմոնյանի համար, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Կոնստանտին Կազակովին եւ Վյաչեսլավ Լոզնիկովին:

Գաբուզյանն ունի 5 միավոր, Սիմոնյանը՝ 4,5: Զավեն Անդրեասյանը պարտվեց Սեմյոն Դվոյրիսին ու 4,5 միավորով նահանջեց մրցաշարային աղյուսակում:

## Մելքումյանը միանձնյա առաջատարն է

Լոնդոնի շախմատի մրցաշարում գերազանց է հանդես գալիս Հրանտ Մելքումյանը: 5-րդ տուրում նա սպիտակներով հաղթեց իր հետ աղյուսակը գլխավորող Չժոու Յանգին: Այդ հաղթանակի շնորհիվ հայ շախմատիստը 5 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը: 3 շախմատիստ՝ Տիգեր Հիլարպ-Պերսոնը, Սայմոն Ուիլյամսն ու Վլադիմիր Համիտեւիչը 4,5 միավորով հետապնդում են Մելքումյանին: 6-րդ տուրում հայ գրոսմայստերը սեւերով կմրցի Տիգեր Հիլարպ-Պերսոնի հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Բումերանգ

*1-ին էջից*

Մենք չենք ասում չէ՞, որ հաշվի առնելով այս հանգամանքը, որոշ եվրոպացի գործընկերներ չեղյալ են հայտարարել ԲՀԿ ղեկավարի հետ հանդիպումները, մենք չենք ասում չէ՞, որ, ի վերջո, եվրոպական կառույցների միջանցքներում կազմակերպել են փոքրիկ թատերական ներկայացումներ, արտաճմլիկ ներկայացումներ հայ որոշ երիտասարդների մասնակցությամբ»: Սա էլ Շարմազանովից՝ Ծառուկյանին:

Հա, ինչ-որ զարմանալի բան, այնուամենայնիվ, կատարվում է: Սակայն կուզեինք այս բոլորի տակի առավել խորը եւ հոգեբանական շերտերը վերլուծել:

Արդյո՞ք իշխանությունն իսկապես վախենում է, որ Ծառուկյանը կարող է իր թեկնածությունը դնել եւ լուրջ քվեներ վերցնել: Բայց մի՞թե ինքը, իշխանությունը մեղավոր չէ այս իրավիճակի համար: Նախ՝ այն բանի համար, որ մեր հասարակությունն այն դիմագիծն է ձեռք բերել, որ կուզենար ունենալ Ծառուկյանի նման նախագահ: Բնականաբար, երբ հասարակության բավական զգալի շերտեր Իսահակյան եւ Մարկես են կարդում, նրանց պահանջները նախագահի թեկնածուի կերպարի վերաբերյալ բոլորովին այլ են, քան այն դեպքում, երբ հասարակության պահանջարկի ամենաանհրաժեշտ բաղադրիչը Քիմ Քարդաշյանի տորսի չափերի մասին տեղեկատվությունն է, կամ՝ հոգեզուրկ-նյութապաշտ-կռապաշտ մեր սերիալային հերոսը, ու այս դեպքում նման պահանջարկով հասարակության նախագահի թեկնածուն բոլորովին այլ մարդ է: Պահանջարկ, ընդհանրապես մարդ ու հասարակություն կրթելու մասին որ միշտ ասվում է, հենց դրա համար է ասվում: Երբ ասում ենք՝ վերջ տվեք այդ անհոգի-բթացնող սերիալներին, դրանց գործած ավերն անդառնալի է, մեզ պատասխանում են, թե հասարակությունը դրանց պահանջարկն ունի, հեռուստաընկերությունների տնօրեններին այդ էժանագին հանրայնությունը դուր է գալիս, այդ տեսակ սերիալին գովազդ է տալիս չորրորդ դասարանի կրթությամբ մեր գործարարների մեծ մասը: Այսինքն՝ հեռուստաընկերության փող վաստակելու միջոցներից մեկն էլ այդ մարդ բթացնող սերիալն է: Ով է երես տալիս այդպիսի հեռուստատեսություններին, ո՞վ՝ սնունդ տալիս այդ կերպարներին: Բայց հենց դրանցով է դաստիարակվել այն մարդը, որը ոչ թե կուզենար ունենալ կրթված, խնդիրները խորքից իմացող ղեկավար ու նրա հետեւից գնալ, այլ ուժեղ, հարուստ փողատիրոջ, որ բոլոր հարցերը լուծելու է ուժի եւ փողի դիրքերից: Հենց այդպես էլ վարվել ենք տարիներ ու ստացել մի հասարակություն, որը օրինակ է վերցնում ոչ թե բարեկիրթ հերոսից (ով բացակա է մեր սերիալներից էլ, մեր լրատվամիջոցներից ու համարյա մեր կյանքից), այլ ուժեղից, անկիրթ-հզորից, գողականից... Ո՞ւմ մասին են գրում ամեն օր լրատվամիջոցները՝ Թոխմախի Միերի, Լֆիկի, մեր մյուս մականունավորների ու հարուստների... թվում է, թե բացասական անդրադարձներով: Բայց դա միայն առաջին հայացքից է այդպես: Իրականում նրանք մեր ԶԼՄ-ների ամենօրյա հերոսներն են, քանի որ նախ հակագովազդը նույնպես գովազդ է, բացի այդ՝ կարդացող միջին հայը մտածում է, թե տես ի՞նչ ուժեղ տղերք են, իրենց մասին գրում ու գրում են, բայց իրենք, ինչ էլ գրեն, թքած ունեն ու հարուստ են, ուրախ, չաղ ու բախտավոր: Ու ցանկանում է նմանվել... հենց այդ մականունավորներին: Բումերա՛նգն է աշխատում, ու շատ ճշգրիտ. ինչ ցանվում, այն էլ հնձվում է: Ու հիմա բոլորովին էլ զարմանալի չէ, որ հասարակության մի զգալի շերտի մոտ պահանջարկված լինի փողատիրոջ եւ ուժով հարց լուծողի կերպարը: Ու նաեւ լրագրողներն են այդպիսին՝ մեղրի կաթիլին եկած ճանճերի պես թափվում փողատերերի վրա՝ իբր քննադատում են, լրագրությամբ են զբաղվում, իրականում... Իրականում այդ մարդկանց մասին պետք է մոռանալ, չանդրադառնալ նրանց ոչ բացասական, ոչ դրական, նրանք չպետք է լինեն լրատվամիջոցների գլխավոր հերոսները: Ու ով է նրանց համար կանաչ ճանապարհ բացել՝ իշխանությունը, իր կամ դիմացի ուժի մեջ, մեկ է: Հիմա եկել ու ի՞նչ եք ասում: Ստացել եք մի հասարակություն, որն իր խնդիրները լուծելու համար հերոս է ընտրում ձեր մատուցած կերպարով ու նմանությամբ, ու այո, պետք է վախենալ, որ օլիգարխը, ինստիտուտին ոչ համապատասխան մարդը կդնի թեկնածությունը եւ ձայներ կտանի: Բայց չէ որ հենց դուք եք նախապատրաստել այս իրավիճակը: Իսկ հիմա ԲՀԿ բրյուսելյան այցի հաղորդագրության մասին ասում եք թատերական ներկայացում ու կամ՝ թատերական ներկայացման առաջին հարվածը ԲՀԿ-ի ու նրա ղեկավարի վրա է ընկնում: Թող որ պրն Ծառուկյանը, ի տարբերություն շատ-շատերի, հոգով բարի մարդ է եւ սիրում է բարեգործություն անել:

ԱՐՏԵՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



## ՎիվաՍել-ՄՏՍ-ն առաջարկում է 7 դրամ/ՄԲ՝ «Բարբառ» սակագնային պլանի շրջանակում

Այժմ «Բարբառ» սակագնային պլանի շրջանակում ինտերնետի 1 ՄԲ-ի գինն իջեցվել է ավելի քան ինն անգամ եւ կազմում է 7 դրամ նախկին 65-ի փոխարեն:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:





# Երեւանը՝ սեյսմավտանգ մայրաքաղաք

Հայաստանի՝ սեյսմավտանգ գոտում լինելը միշտ եղել է անհանգստության առարկա, սակայն 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո եւ հատկապես վերջին երկու տարվա ընթացքում անընդհատ կրկնվող երկրաշարժերն ու դրանց ֆոնին մայրաքաղաքի կառուցապատումը դառնում են լուրջ խնդիր: Թեպետ թեմայի վերաբերյալ եղել են բազմաթիվ քննարկումներ, հանդիպումներ ու նախաձեռնություններ, սակայն էական փոփոխություններ չկան:

Խորհրդային տարիներին կառուցված շենքերի 95 տոկոսը չի բավարարում ժամանակակից նորմերի պահանջները: Այսօր մայրաքաղաքում գոյություն ունի 4-րդ աստիճանի վթարային մոտ 15 շենք, որոնք ենթակա են քանդման, 3-րդ աստիճանի վթարայնության 300 բազմահարկ շենք, որոնք անհապաղ պետք է ամրացվեն: Սրան հավելած՝ նորանոր կառուցապատումների հետեւանքով սեյսմակայունության առումով հատկապես մայրաքաղաքում իրավիճակը դառնում է աղետալի: Մասնագետները բազմիցս շեշտել են, որ մայրաքաղաքը քաղաքացիների համար անհարմար ձեւով է կառուցված, եւ ոչ միայն բազմաբնակարան շինությունների, այլեւ ընդհանրապես մայրաքաղաքի սեյսմիկ ռիսկը խիստ բարձր է գնահատվում: Սակայն դրան զուգահեռ շենքերը դառնում են սեյսմավտանգ, որովհետեւ բնակիչները անթույլատրելի ձեւափոխումներ են կատարում, մինչդեռ առանց մասնագիտական թույլտվության չի կարելի տան տեսքը փոխել: Սակայն այդ փաստին այսօր քչերն են ուշադրություն դարձնում:

Բացի բազմաբնակարան շենքերից՝ ռիսկային են նաեւ մշակութային օջախները, եկեղեցիներն ու արձանները, որոնք տասնամյակներ շարունակ չեն ամրացվել եւ 7-բալանոց երկրաշարժից կավերվեն:

Հ. Հ.



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման ժամկետը | Հողամասի մակերեսը | Շինության մակերեսը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ծերենցի 3/3 | Կաթսայատուն | 141.36 | 158.76 | 10,800,000 |
| 2 | Նալբանդյան 49/3 | Կաթսայատուն | 155.00 | 135.70 | 36,675,000 |
| 3 | Դավթաշեն 4 թաղ. ԿՋՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 21,000,000 |
| 4 | Դավթաշեն 4 թաղ. ԿՋՀ 1 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 21,000,000 |
| 5 | Դավթաշեն 4 թաղ. ԿՋՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 23,230,000 |
| 6 | Դավթաշեն 2 թաղ. ԿՋՀ 3 | Կաթսայատուն | 242.25 | 211.10 | 12,750,000 |
| 7 | Դավթաշեն 2 թաղ. ԿՋՀ 1 | Կաթսայատուն | 237.12 | 206.60 | 14,300,000 |
| 8 | Հալաբյան փողոց 31/5 հ. ԿՋՀ 5 | Կաթսայատուն | 367.60 | 267.80 | 12,000,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ դեկտեմբերի 21-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ դեկտեմբերի 21-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | «АРТКМ-Г-5312» տրանսպորտային միջոց | 21-28 АДЦ | 1990թ | 120,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ դեկտեմբերի 21-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ դեկտեմբերի 21-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Հողամասի մակերեսը | Գույքի օգտագործման ժամկետը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ* | | | | | | |
| 1 | Բաղրամյան 25 | 188.1 | 216.1 | կաթսայատուն | 5 տարի | 62.0 հազ.դրամ |
| 2 | Հերացու 18/5 | 170.7 | 213.44 | կաթսայատուն | 5 տարի | 83.0 հազ.դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ դեկտեմբերի 21-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ դեկտեմբերի 21-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝6.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: